


The image shows two tall, slender stone crosses standing in a field. The crosses are covered in intricate carvings, including geometric patterns, floral motifs, and religious figures. The cross on the left has a large central cross with a figure in the center, and the cross on the right has a similar design. The background is a clear sky, and there are some bushes in the foreground.

ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՄԴԱՆՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐ



1454239 947.925, 1915" ✓

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇԽԵԱՆ
ՄԱՏԵՆԱԾԱՐ
182



ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
182

Signature

ԵՐԵՎԱՆ 2018



ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Մ 399

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀՀ ՍՓՅՈՒՌԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՈՎ

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Մարության Ա.Յ.

Մ 399 Հայոց ցեղասպանության պատմության հիմնահարցեր / Ա. Յ.
Մարության.- Եր.: ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 2018. – 95 էջ:

Աշխատությունում արխիվային նյութերի, փաստաթղթերի, հայ և օտար մասնագետների ուսումնասիրությունների հիման վրա ներկայացվում և քննարկվում են Հայոց ցեղասպանության պատմության մի շարք առանցքային հիմնահարցեր: Համակողմանի ուսումնասիրության են ենթարկվել հայերի ցեղասպանության հանցավոր մտադրության, Մեծ եղեռնի իրագործման փուլերն ու հայերի ինքնապաշտպանական մարտերը, անդրադարձ է կատարվել թուրքական և հետագայում նաև ադրբեջանական իշխանությունների կողմից արգեն արևելահայության և ադրբեջանահայության նկատմամբ ցեղասպան քաղաքականության շարունակության հարցերին: Հայկական հարցը դիտարկվել է միջազգային պայմանագրերի ու փաստաթղթերի լույսի ներքո, արծարծվել են ոչ միայն Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման, այլև այդ հանցագործության հետևանքների հաղթահարման, հատուցման հիմնահարցերն ու հնարավորությունները:

Աշխատությունը նախատեսված է բուհերի «Պատմություն» և «Միջազգային հարաբերություններ» մասնագիտությունների ուսանողների և մագիստրանտների, ինչպես նաև Սփյուռքի համայնքների կրթական հաստատություններում դասավանդող ուսուցիչների համար: Այն օգտակար կարող է լինել նաև մասնագետ ընթերցողներին:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ՆԱԽԱԲԱՆ

Թուրքական իշխանությունների կողմից հայ ժողովրդի նկատմամբ իրականացվող ցեղասպանության քաղաքականության սկիզբը դրվեց 1894–1896 թթ. Արևմտյան Հայաստանում սուլթան Աբդուլ Համիդի կողմից հայերի զանգվածային կոտորածներով, որոնց զոհ գնացին ավելի քան 300 հազար մարդ։ Այդ հանցավոր քաղաքականությունը շարունակեցին 1908 թ. հեղաշրջման միջոցով իշխանության եկած երիտթուրքերը, որոնք նախ՝ 1909 թ. իրականացրին Կիլիկիայի հայության կոտորածները, ոչնչացնելով շուրջ 30 հազար հայերի, իսկ այնուհետև, օգտվելով Առաջին աշխարհամարտի հանգամանքից, իրագործեցին Մեծ եղեռնը՝ բնաջնջելով շուրջ 1.5 մլն հայերի և այդպիսով գրեթե ամբողջովին Արևմտյան Հայաստանում վերջ դնելով հայերի հազարամյակների ներկայությանը։

1918 թ., ներխուժելով Արևելյան Հայաստան, թուրքական զորքերը շարունակեցին հայ բնակչության բնաջնջման ծրագիրն արդեն Ռուսական կայսրությունում, մասնավորապես՝ Արևելյան Հայաստանում, ինչի դրսևորումներից էին Ախալքալաքի գավառի, Շուշիի և Բաքվի հայության 1918 թ. ջարդերը։ Հայաստան քաղաքականությունը ժառանգեցին նաև քեմալականները, որոնք 1919–1922 թթ. իրականացրին Կիլիկիայի և Զմյուռնիայի հայության կոտորածները։

Հանրապետական Թուրքիայի վարչակարգերն իրենց հերթին շարունակեցին երիտթուրքերի կառավարման ժամանակ Հայոց ցեղասպանությանը զուգահեռ իրականացվող հայերի ունեցվածքի բռնազավթման և մշակութային ցեղասպանության քաղաքականությունը։ Վերջինիս միջոցով փորձ էր կատարվում Արևմտյան Հայաստանից վերացնել հայերի՝ տեղաբնիկ ժողովուրդ լինելու հետ-

քերն ու վկայությունները: Շարունակվում էին հալածանքները Արևմտյան Հայաստանի տարբեր հատվածներում մնացած բռնի իսլամացված հայերի փոքրաթիվ խմբերի նկատմամբ: Հետևողականորեն սահմանափակվում էին նաև 1923 թ. Լոզանի պայմանագրով ամրագրված Ստամբուլի հայկական համայնքի և Հայոց պատրիարքարանի իրավունքները: Այսպիսով, թուրքական բոլոր վարչակարգերը, պետական կառավարման ձևի ու քաղաքական հայացքների տարբերություններից անկախ, միասնական են եղել հայատյացության հարցում և ժառանգաբար շարունակել են հակահայկական քաղաքականությունը:

Հայ ժողովրդի նկատմամբ իրագործված ցեղասպանության կազմակերպիչների և հանցավոր պետության անպատժելիությունը հետազայում հանգեցրեց այդ հանցագործության կրկնություններին՝ Երկրորդ աշխարհամարտի տարիներին Ողջակիզմանը, 1975-1979 թթ. Կամրոջայի ցեղասպանությանը, 1993 թ. Նախկին Հարավսլավիայի տարածքում՝ Սրբերենիցայի ցեղասպանությանը, 1994 թ. Ռուանդայի ցեղասպանությանը, 2003 թ.՝ Դարֆուրի ցեղասպանությանը, վերջապես՝ «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորման կողմից Իրաքի և Սիրիայի տարածքում քրիստոնյաների, եզդիների և քրդերի ցեղասպանությանը:

Անցած հարյուրամյակի ընթացքում ոչ միայն հայ, այլև օտարազգի պատմաբանների ու ցեղասպանագետների կողմից հրատարակվել են հազարավոր հետազոտություններ, որոնցում հայ ժողովրդի նկատմամբ թուրքական իշխանությունների իրագործած զանգվածային բնաջնջումը որակվում է որպես կազմակերպված հանցավոր քաղաքականություն: Նույնն են վկայում տարբեր երկրների արխիվներում պահվող փաստաթղթերի հիման վրա հրատարակված ժողովածուների նյութերը: Չնայած այդ ամենին, Թուրքիան ոչ միայն չի համակերպվում պատմական փաստերի հետ, այլև պե-

տական մակարդակով վարում է Հայոց ցեղասպանության ժխտման քաղաքականություն: Այս քաղաքականությամբ հենց Թուրքիան, փաստորեն, Հայոց ցեղասպանության խնդիրը դուրս է բերել պատմական հարթությունից և այն վերածել է քաղաքական հարցի:

Մի շարք կառավարական և ոչ կառավարական միջազգային կազմակերպություններ ու ավելի քան երկու տասնյակ պետություններ արդեն իսկ տվել են Հայոց ցեղասպանության քաղաքական գնահատականը՝ այն որակելով որպես ծանր միջազգային հանցագործություն ու դատապարտել: Սակայն Թուրքիայի Հանրապետությունը չի ցանկանում համակերպվել նաև Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման բանաձևերի հետ: Ավելին, տարաբնույթ միջոցներ է ձեռնարկում Հայոց ցեղասպանության փաստի արձանագրումը նոր երկրներում թույլ չտալու համար:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարեիցից հետո Հայոց ցեղասպանության պատմության դասավանդումը և դրա հետ կապված տարաբնույթ հարցերի ու խնդիրների ներկայացումն ու քննարկումը հայության համար ձեռք է բերել նոր իմաստ և նշանակություն: Հայոց ցեղասպանության 100-րդ տարեիցի միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի կողմից Համահայկական հոգակազմի ընդունումով ի լուր աշխարհի հայտարարվեց, որ այսուհետ Հայաստանը և հայ ժողովուրդը չեն բավարարվելու լոկ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման համար մղվող պայքարով, այլ պայքարելու են նաև այդ հանցագործության հետևանքների հաղթահարման համար, ինչն, ըստ էության, նշանակում է պայքար հատուցման ու Հայոց պահանջատիրության համար: Ռազմավարական այս նոր շեշտադրումը պահանջում է վերաիմաստավորել Հայոց ցեղասպանության պատմության դասավանդման թեմաները և որոշ խնդիրների ներկայացումը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՀԱՅ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ XIX ԴԱՐԱՎԵՐՋԻՆ ԵՎ XX ԴԱՐԱՍԿԶԵԻՆ

**1.1. 1894–1896 թթ. հայերի զանգվածային
կոտորածներն Արևմտյան Հայաստանում և Օսմանյան
կայսրության հայաբնակ այլ տարածքներում**

1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը եզրափակող Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ և Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածներով Հայկական հարցը* դադարեց լինել Օսմանյան կայսրության ներքին հարց, այն միջազգայնացվեց և դարձավ եվրոպական դիվանագիտության օրակարգային խնդիր: Նշված պայմանագրերով Օսմանյան կայսրությունը մեծ տերությունների առջև պարտավորություն էր ստանձնել Արևմտյան Հայաստանի նահանգներում բարեփոխումներ կատարել, հայ բնակչության* իրավունք-

* «Հայկական հարցը» դիվանագիտության պատմության մեջ հայտնի է որպես արևմտահայերի իրավունքների և անվտանգության պաշտպանության հարց. որի լուծումը վերջնարդյունքում հանգեցնելու էր իր հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում բնակվող հայության ինքնորոշման իրավունքի իրացմանը, այն է՝ Օսմանյան կայսրության տիրապետությունից Արևմտյան Հայաստանի ազատագրմանն ու անկախ պետականության վերականգնմանը: «Հայկական հարցը» համարվում էր «Արևելյան հարցի» բաղկացուցիչ մասը, որը եվրոպական դիվանագիտության մեջ հայտնի էր որպես Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող ոչ մահմեդական ժողովուրդների ազատագրման, ինչպես նաև այդ կայսրության տարածքների՝ մեծ տերությունների միջև բաժանման հիմնախնդիրների ամբողջականություն:

* Հայոց պատրիարքարանի վիճակագրության համաձայն 19-րդ դարի վերջին Օսմանյան կայսրության հայ բնակչությունը տեղաբաշխված էր հետևյալ կերպ.

ները հավասարեցնել մահմեդականների ունեցած իրավունքների հետ, ինչպես նաև ապահովել հայ բնակչության անվտանգությունը մահմեդականների հարձակումներից: Սակայն սուլթան Աբդուլ Համիդ II-ը ոչ միայն չէր պատրաստվում իրագործել միջազգային պարտավորությունները, այլև ավելի սաստկացրեց ճնշումը հայ բնակչության նկատմամբ: Աբդուլ Համիդն ուներ Հայկական հարցի «լուծման» սեփական՝ «չկան հայեր՝ չկա և Հայկական հարցը» բանաձևը, ինչից ելնելով՝ նա 1891 թ. քրդերից կազմավորեց «համիդի» հատուկ գնդերը, որոնց միջոցով հետագայում իրականացվեցին հայերի զանգվածային կոտորածները:

Հայ բնակչությունն ընդվզեց Աբդուլ Համիդի հայաջինջ քաղաքականության դեմ: 1893–1894 թթ. Սասունում հայերը դիմեցին ինքնապաշտպանության, սակայն նրանց դիմադրությունը ճնշվեց համիդեական գնդերի, մահմեդական ավագակախմբերի և թուրքական կանոնավոր զորքերի կողմից, ինչից հետո տեղի ունեցավ հայ բնակչության դաժան կոտորածը¹: Համիդյան հայաջինջ քաղաքականության շարունակության պայմաններում հարկադրված ինքնապաշտպանության դիմեց նաև Զեյթունի և Վանի հայ ազգաբնակչությունը: Ի տարբերություն Սասունի, թուրքական իշխանությունները, այս բնակավայրերում լիովին չկարողացան իրականացն-

ա.) Արևմտյան Հայաստանի Վանի, Բիթլիսի, Էրզրումի, Դիարբեքի, Խարբերդի և Սեբաստիայի նահանգներում՝ 1 մլն 630 հազար մարդ.

բ.) Կիլիկիայի և Հյուսիսային Ասորիքի՝ Ադանայի և Հալեպի նահանգներում՝ 380 հազար մարդ,

գ.) Ասիական Թուրքիայի՝ Տրապիզոնի, Կասաումոնուի, Անգորայի, Կոնիայի, Բուրսայի, Իզմիրի, ինչպես նաև Սիրիայի, Լիբանանի, Մոսուլի, Բաղդադի և Բասրայի նահանգներում՝ 455 հազար մարդ,

դ.) Ալբուլակյան Թուրքիայի՝ Ադրիանուպոլսի և Սալոնիկի նահանգներում՝ 60 հազար մարդ.

ե.) Մայրաքաղաք Կ.Պոլսում և արվարձաններում՝ 135 հազար մարդ.

Ընդամենը՝ 2 մլն 660 հազար մարդ:

¹ Տե՛ս Սպիրով Դ.Ա., *Հայերի տարտախեղ կոտորածները (1894–1896 թթ.)*, Ե., 1997, էջ 38–41:

ել իրենց հայասպան քաղաքականությունը և հարկադրված էին բանակցությունների մեջ մտնել հայերի հետ ու որոշակի զիջումների գնալ¹: 1895 թ. հոկտեմբերից մինչև 1896 թ. հունվար տևած ինքն-ինքնապաշտպանական մարտերի արդյունքում Ջեյթունի հայերը բարոյական և գործնական հաղթանակի հասան թուրքական զինված ուժերի նկատմամբ՝ ստիպելով օսմանյան իշխանություններին հաշտության բանակցություններ վարել իրենց հետ:

1896 թ. հունիսի 3-ից 8-ը տևած Վանի հերոսական ինքնապաշտպանության արդյունքում, թուրքական իշխանությունները, նույնպես հարկադրված եղան բանակցություններ վարել հայերի հետ և համաձայնություն ձեռք բերվեց, որ հայ մարտիկները կթողնեն Վանը այն պայմանով, որ թուրքական իշխանությունները չեն վնասի բնակչությանը²: Սակայն թուրքական իշխանությունները հետագայում չկատարեցին իրենց պարտավորությունը և ամեն կերպ փորձում էին ոչնչացնել Վանից Պարսկաստան տեղափոխվող հայ մարտիկներին: Վանի ինքնապաշտպանական մարտերի շնորհիվ չհաջողվեց այստեղ իրականացնել այն ջարդն ու թալան, ինչպիսին կատարել էր ինքնապաշտպանությունից զուրկ այլ վայրերում:

1895 թ. հոկտեմբերի 5-ին սկսվեց Տրապիզոնի հայերի ջարդը, որին մասնակցություն ունեցավ նաև այնտեղ տեղակայված զորքը: Ջարդին զուգահեռ տեղի էր ունենում հայերի տների, արհեստանոցների և խանութների կողոպուտը: Ավերվեցին և կողոպտվեցին շրջակա հայկական գյուղերն ու եկեղեցիները, հայերի մի մասը բռնի կերպով կրոնափոխ եղավ: Նույն բախտին արժացավ նաև Սամսունի հայ բնակչությունը:

¹ Տե՛ս Աղասի, *Չեյթուն և իր շրջակայքեր*, Պեյրուք, 1968, էջ 357–373:

² Տե՛ս Ամուրեան Ա., *Հայ դատ, հայ ժողովրդի սպառնալուծական ճիգերը*, Թեհրան, 1977, էջ 68:

Աքիսարում տեղի ունեցած ջարդի ժամանակ սպանվեցին հայ առևտրականները, թալանվեցին հայերին պատկանող շուրջ 200 խանութների մեծամասնությունը: Հանցագործները Բոսնիայից, Բուլղարիայից և Ռումելիայից գաղթած ու շրջանում բնակեցված թուրքեր էին: Նրանց գործողությունները ղեկավարվում և քաջալերվում էին տեղի իշխանությունների, ոստիկանների և զինվորների կողմից: Դեպքերի կապակցությամբ սուլթանական կառավարությունը շրջաբերական էր հղել արտասահմանյան երկրներում գործող իր բոլոր ներկայացուցչություններին, ուր փաստերն ամբողջովին խեղաթյուրված էին ի վնաս հայերի, որոնք իբր հարձակում են գործել մահմեդականների վրա¹:

1895 թ. հոկտեմբերի 7-ին հայերի կոտորած սկսվեց Դերջանի գավառում, որի ժամանակ հիմնականում կենդանի են մնում նրանք, ովքեր համաձայնում են կրոնափոխ լինել: Երկու օր անց Երզնկայում տեղի ունեցած կոտորածի ընթացքում քաղաքը կողոպտվում է, ավերվում են հայկական եկեղեցիները: Տեղական իշխանությունների կողմից բանտ են նետվում և սպանվում քաղաքի շուրջ 70 ականավոր հայեր:

Հոկտեմբերի 10-ին Քղիի գավառուսկում սկսված ջարդին զոհ դարձան հազարից ավելի հայեր, ավերվեցին բազմաթիվ գյուղեր և շուրջ 25 վանք ու եկեղեցի: Նույն օրերին կոտորածների զոհ են դառնում նաև Բիթլիսի նահանգի 102 գյուղերի հայ բնակիչները: Հայերի մի մասը կարողացավ փախչել մոտակա լեռները, սակայն մահացավ սովից և ցրտից²:

Հոկտեմբերի 16-ին կանոնավոր բանակն ու ամբոխը կողոպտում, ավերում ու հրկիզում են Ուրֆայի հայերի շարժական ու անշ-

¹ FO. 424/184. No. 153, p. 108.

² *Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов. Сборник документов и материалов. Под редакцией проф. Персисяна М.Г., Е., 1983. с. 89-90.*

արժ գույքը: Իշխանությունները զենք էին բաժանում խաժամուժին և կոչ անում կոտորել հայերին ու զավթել նրանց ունեցվածքը: Հիմնականում բնակված լինելով քաղաքի մեկ թաղամասում, հայերը կարողացան դիմադրություն կազմակերպել և ետ մղել հարձակվողներին: Իշխանությունները հրաման արձակեցին պաշարել հայկական թաղամասը և օգտագործել թնդանորթներ, սակայն դա էլ նրանց չօգնեց: Պաշարումը շարունակվում է հիսուն օր, որից հետո իշխանությունները ձևականորեն վերացնում են այն՝ կարգադրելով անցնել խաղաղ աշխատանքի¹: Դրանից հետո անակնկալ ձևով դեկտեմբերի 16-ին երեք հազար զինվոր և 1500 համիդետական է ուղարկվում Ուրֆայի հայկական թաղամաս՝ և կոտորվում է ութ հազարից ավելի հայ²:

Շապին Գարահիսարում հայերի կոտորածը սկսվեց հոկտեմբերի 16-ին: Հայերի հերոսական դիմադրությունը կոտորելուց հետո բնակչությունը ենթարկվեց կոտորածի, նրանց ունեցվածքը կողոպտվեց, իսկ տները ավերվեցին: Զոհվածների թիվը քաղաքում հասավ երկու, իսկ շրջակա 30 գյուղերում՝ երեք հազարի:

1895 թ. հոկտեմբերի 18-ին Կարինում (Էրզրում) զոհվում է 400 հայ, կողոպտվում է 1500 խանութ: Կարնո դաշտի հայկական գյուղերից 40-ը ավերվում է, իսկ երեքի բնակչությունը բռնի կերպով մահմեդականացվում է, կողոպտվում է Հասան Կալեի վանքը և 20 եկեղեցի, սպանվում է 1500 հայ³:

Հոկտեմբերի 21-ին կոտորածներ սկսվեցին նաև Մալաթիայում, որտեղ, ինչպես շատ քաղաքներում, մոլեռանդ ամբոխին նախօրոք զենք էր բաժանվել: Մալաթիայում հայերի ջարդն ու թալանը շարունակվեց նաև նոյեմբերի 4-9-ը: Ինքնապաշտպանական

¹ Տե՛ս *Геноцид армян в Османской империи*, էջ 90:

² «Արաքս», Գիրք Բ, 1894–1895, Ս. Պետերբուրգ, 1897, էջ 135–136:

³ Տե՛ս *Геноцид армян в Османской империи*, էջ 83–84:

մարտերի և կոտորածների արդյունքում Մալաթիայում զոհվեց երեք հազարից ավելի մարդ, շուրջ հազար տուն այրվեց ¹: Հոկտեմբերի 25-ին կոտորածներ են տեղի ունենում միաժամանակ Բիթլիսում և Գյումուշխանեում: Զգալի վնասներ են կրում շրջակա հայ գյուղերը, որոնց բնակչության մի մասին տեղական իշխանությունները ստիպում են կրոնափոխ լինել:

Հոկտեմբերի 26-ին մեծ ավերածությունների են ենթարկվում Խարբերդը և շրջակա 55 գյուղերը, ավերվում և կողոպտվում են գրեթե բոլոր հայկական եկեղեցիներն ու դպրոցները²: Հոկտեմբերի 27-ին սկսում է Բաբերդի հայ բնակչության ջարդը շրջակա գյուղերում իրագործված կոտորածից ու թալանից անմիջապես հետո: Լուր ստանալով գյուղերում տիրող իրավիճակի մասին, քաղաքի հայերը փակում են իրենց խանութները, սակայն Երզնկայից ժամանած զինվորները ստիպում են նրանց բացել գործատեղերը, որից անմիջապես հետո սկսվում է ջարդն ու թալանը: Այն տևում է ութ ժամ, մոլեռանդ ամբոխին աջակցում էին զինվորները: Արդյունքում զոհվում է մի քանի հարյուր մարդ, թալանվում և պղծվում են քաղաքի հայկական եկեղեցիները:

Նոյեմբերի 1-3-ը կոտորածներ տեղի ունեցան Դիարբեքիրում, որոնց արդյունքում զոհվեց շուրջ երկու հազար հոգի: Դիարբեքիրի նահանգում ավերվեց 119 հայկական գյուղ՝ 6 հազար ընտանիքով: Սպանված և անհայտ կորած բնակիչների թիվը հասավ 30 հազարի³:

Նոյեմբերի 3-ին կոտորածներ սկսվեցին Մարզվանում: Երբ հայերը բացեցին խանութները և սկսեցին առևտուրը, զինված ամբոխը, զինվորներն ու մոտակա գյուղերից եկած ավազակախմբերը

¹ Հայ ժողովրդի պատմություն, Հ. 6, Ե., 1981, էջ 269:

² «Արաբս», Գիլդ Բ, 1894—1895, Ս. Պետերբուրգ, 1897, էջ 140:

³ «Արարատ», 1896, մայիս, էջ 95, 122:

շարժվեցին դեպի շուկա, կողոպտեցին ու ոչնչացրին հայերի շուրջ 1500 խանութներ: Թալանի ժամանակ հույների խանութները չէին տուժել: Այնուհետև ամբոխը հարձակվեց հայկական թաղամասերի վրա, բայց բնակչությունը վճռական դիմադրությամբ ետ մղեց նրանց: Այդ օրը սպանվեց 100 և վիրավորվեց 500 հոգի: Հայկական թաղամասերը երկար ժամանակ մնացին պաշարված, շատերը մահանում էին քաղցից և ջրի պակասությունից¹:

Չնայած եվրոպական տերությունների բողոքներին՝ կոտորածները չէին դադարում, քանի որ դրանք չէին զուգակցվում այդ երկրների կոնկրետ գործողություններով: Վերջապես նոյեմբերի 11-ին մեծ տերությունների դիվանագիտական ներկայացուցիչների հերթական հանդիպման ընթացքում Ռուսաստանի դեսպանի առաջարկով տերությունները համաձայնվում են ռազմանավեր մտցնել նեղուցներ, որոնց առկայությունը Կ. Պոլսում, նրանց կարծիքով, կարող էր ազդեցություն ունենալ սուլթանական կառավարության վրա և կանխել ճգնաժամի հետագա խորացումը: Աբդուլ Համիդն, ի վերջո, ստիպված էր թույլ տալ, որ տերությունների ռազմանավերը մուտք գործեն Կ. Պոլիս, և դեկտեմբերի 12-16-ը Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Իտալիայի և Ավստրո-Հունգարիայի ռազմանավերը հերթով մտնում են Դարդանել:

1896 թ. գարնան և ամռան ամիսների ընթացքում Օսմանյան կայսրությունում տիրում էր համեմատական անդորր, սակայն դա ժամանակավոր էր, քանզի իրականում այդպես էլ ոչինչ չփոխվեց, սուլթանական կառավարությունը նույնիսկ չէր էլ պատրաստվում բարենորոգումներ իրագործել արևելյան շրջաններում: Սուլթանական կառավարությունը հաջողությամբ մշակեց և իրականացրեց հայերին կոտորելու մի ամբողջ համակարգ այն շրջաններում, որտեղ նրանք կազմում էին բնակչության զգալի տոկոս:

¹ *Геноцид армян в Османской империи*, с. 79–80.

4. Պոլսում հայերի կոտորածը դադարեցնելու՝ դեսպանությունների փորձերը գլխավորում էր Ռուսաստանի դեսպան Նելիդովը, որը չէր բավարարվում բողոքի անարդյունավետ հայտագրերով: Նա նախազգուշացրել էր սուլթանին, որ, եթե կոտորածը չդադարեցվի, ինքը հրամայելու է ռուսական նավերին կրակել Բոյուկդերեի վրա: Ռուս դեսպանի վճռական կեցվածքը հարկադրեց սուլթանին ցրվելու հրաման տալ վայրենի խաժամուժին¹: 4. Պոլսում տեղի ունենեցած իրադարձությունները ընդամենը մի դրվագ էին Օսմանյան կայսրության հայ բնակչության ջարդերի շղթայում, որոնց միջոցով նպատակ էր հետապնդվում թուրքական տարբերակով «լուծել» Հայկական հարցը՝ բնաջնջելով հայերին ոչ միայն իրենց պատմական հայրենիքի՝ Արևմտյան Հայաստանի տարածքում, այլև ամբողջ երկրում:

1894–1896 թթ. ընթացքում կոտորված հայերի թիվը հասավ 300 հազարի, կոտորածները կրում էին համատարած, կանխամտածված և կազմակերպված բնույթ, նրանց իրականացնողներն էին ինչպես սուլթանի կողմից հատուկ ստեղծված «համիդե» գնդերի ու մուլեռանդ մահմեդական բնակչության, այնպես էլ ժանդարմերիայի, որոշ դեպքերում՝ նաև օսմանյան բանակի ստորաբաժանումների կողմից:

Այսպիսով, Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության այլ տարածքներում հայ բնակչության զանգվածային կոտորածներով ու բռնի իսլամացմամբ Աբդուլ Համիդի կողմից դրվեցին հայերին ցեղասպանելու թուրքական պետական քաղաքականության հիմքերը, որն Առաջին աշխարհամարտի տարիներին ավելի կատարելագործված ձևով շարունակվեց երիտթուրքերի, իսկ այնուհետև՝ նաև քեմալականների կողմից:

¹ Grenville J.A.S., *Lord Salisbury and Foreign Policy*, London, 1964, pp. 75–76.

1.2. 1909 թ. Կիլիկիայի հայության կոտորածները

1908 թ. գինձորական հեղաշրջման միջոցով երիտթուրքերի իշխանության գալուց հետո թվում էր, թե եվրոպական ուսումնական հաստատություններում կրթված նոր թուրք իշխանավորները կկատարեն քրիստոնյա ժողովուրդների իրավունքները մահմեդականների իրավունքներին հավասարեցնելու՝ իրենց տված խոստումները և կպահպանեն վերահաստատված սահմանադրության պահանջները: Սակայն սահմանադրության վերահռչակումից մեկ տարի չանցած, 1909 թ. ապրիլին, տեղի ունեցավ Կիլիկիայի հայության կոտորածը, որը լիովին բացահայտեց թուրքական հին ու նոր՝ «սահմանադրական» վարչակարգերի վարած քաղաքականության նույնականությունն ու ժառանգականությունը:

Կիլիկիահայության կոտորածների գլխավոր պատճառներից մեկը Կիլիկիայից հեռացած հայ գաղթական գյուղացիների մի մասի վերադարձն էր: Համիդյան զանգվածային ջարդերի ժամանակ և դրան հաջորդած տարիներին Արևմտյան Հայաստանի և Հայկական Կիլիկիայի հարյուրավոր գյուղեր դատարկվել էին և դարձել թուրքերի, քրդերի և չերքեզների սեփականություն: Եվ ահա 10-12 տարի առաջ իրենց բնակավայրերից քշված կիլիկիահայերից շատերը հեղաշրջումից հետո, իրավունք ստանալով, սկսել էին վերադառնալ և իրենց գյուղերում վերաբնակվելու թույլտվություն պահանջել: Հայերի ունեցվածքը զավթած հատկապես քրդերի շրջանում ծայր առած դժգոհության ալիքը իշխանություններն ուղղեցին հայ ներգաղթողների և ընդհանրապես հայերի դեմ: Կիլիկիայում թուրք և քուրդ վերնախավը հայերի նկատմամբ լցվել էին ատելության և վրեժխնդրությամբ: Թուրքական կառավարությունը հանգել էր այն եզրակացության, որ Կիլիկիայում հայերի առաջընթացը կանգնեցնելու համար մի միջոց կա միայն՝ նրանց ոչնչացնել՝

ջարդն սկսելով Ադանայից, որտեղ հայերը առաջատար դիրք էին գրավում ինչպես առևտրում, այնպես էլ ձեռնարկատիրության ու գյուղատնտեսության ոլորտներում¹:

1909 թ. ապրիլի 1-ին գինված խուժանը Ադանայի վալի Մեհմեդ Զևադ բեյի ցուցումով խուժեց քաղաքի հայկական թաղերը: Զևադ բեյն իր ստորադրյալ գավառական պաշտոնյաներին հրահանգներ էր տալիս, որ նահանգում սկսված կոտորածների ժամանակ պետք է պաշտպանել միայն օտարահպատակներին, իսկ տեղի քրիստոնյաների նկատմամբ լինել անողորք, ջարդերի ընթացքում ամեն կերպ խրախուսել «կտրիճներին»: Կոտորածի նախօրյակին մահմեդական բնակչությանը բաժանվել էր զենք և բանտերից ազատվել էին ոճրագործներ: Փոքրաթիվ հայ տղամարդիկ, քաղաքի կարևոր կետերում դիրքեր գրավեցին և պատրաստվեցին վճռական կռվի 30 հազարից ավելի գինված ամբոխի դեմ²: Այդ դիմադրության շնորհիվ էր, որ Ադանայի հայության մի մասը փրկվեց լիակատար ոչնչացումից:

Երեք օր տևած ջարդերից հետո Զևադ բեյի նախագահությամբ տեղի ունեցավ թուրք և հայ երևելիների հանդիպում, որի ընթացքում հետևյալ պայմաններով հաշտություն կնքվեց.

1. երկու կողմերն անմիջապես դադարեցնում են կրակը,
2. հայերը պարտավոր էին երեք օրվա ընթացքում լիովին զինաթափվել և զենքը հանձնել իշխանությանը,

3. քաղաքի պաշտպանությունը հանձնվում էր նոր եկած զորքին, որը պետք է շրջիկ պահակներ կարգեր թե՛ հայկական, թե՛ թուրքական բոլոր թաղերում³: Ստորագրվում է «հաշտության պայմանագիր», որով վերջ է դրվում ապրիլի 1-ին սկսված կոտորածին:

¹ Սիմոնյան Հ., *Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ)*, Ե., 2009, էջ 33–36:

² Նույն տեղում, էջ 55–57:

³ Նույն տեղում, էջ 61–62:

Չնայած դրան՝ ապրիլի 12-ին սկսվեց Ադանայի քրիստոնյաների երկրորդ ջարդը, երբ երիտթուրքական զորքերը հայտնվեցին Ադանայում՝ իբր կարգուկանոնը վերականգնելու պատրվակով: Ապրիլի 12-ից 14-ը տևած ջարդերն իրենց դաժանությամբ գնահատանքին նախորդին: Կիլիկիայի ջարդերին զոհ գնաց շուրջ 30 հազար հայ, որից ավելի քան 20 հազարը՝ Ադանայի նահանգում¹, նյութական ընդհանուր վնասը կազմում էր 80 մլն դոլար²:

Կիլիկիայի հայության ջարդերը հանդիսացան արդուլիամիդյան քաղաքականության շարունակությունը և գալիք մեծ ոճրագործության սկիզբը:

¹ Տե՛ս Թովուգյան Հ., Սիրիացի և Լիբանանի հայկական գաղթաօջախների պատմություն (1841–1946), Ե., 1986, էջ 99:

² Ղազարեան Հ., Ցեղասպան թուրքը, Պլյուրոթ, 1968, էջ 173:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ԵՎ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ

2.1. Հայերի զանգվածային բնաջնջման երիտթուրքերի ծրագիրը և ցեղասպան քաղաքականության նախապատրաստումը

Երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը, անցնելով իշխանության գլուխ, ամրագրեց պանթուրքիզմի՝ ազգայնամոլ քաղաքականությունը: Այն ուղղված էր կայսրության ոչ թուրք ժողովուրդների, առաջին հերթին՝ հայերի դեմ: Հայաստանը և հայերը խոչընդոտ էին հանդիսանում «Մեծ Թուրան»^{*} երևակայական պետության ստեղծման համար:

Օգտագործելով պատերազմական իրադրությունը՝ երիտթուրքերը հնարավորություն էին ստանում իրականացնել արևմտահայերի ոչնչացման ծրագիրը: Միաժամանակ իշխանությունները ձգտում էին տիրել հայերի ունեցվածքին, վերացնել իրենց համար անցանկալի տնտեսական մրցակիցներին:

* Պանթուրքիզմի գաղափարախոսության համաձայն, Օսմանյան կայսրության տարածքներում բնակվող տարբեր կրոնների ու ազգությունների ժողովուրդներից պետք է ստեղծվեր միաստորյա թուրքական բնակչություն, ինչը ենթադրում էր բոլոր ոչ թուրք ժողովուրդների թուրքացում կամ ոչնչացում:

«Մեծ Թուրանի» ստեղծումը երիտթուրքերի պանթուրքիզմի գաղափարախոսության արտաքին ուղղության՝ թուրանիզմի կարևորագույն դրույթն էր, որը ենթադրում էր Օսմանյան կայսրությանը թուրքախոս բնակչություն ունեցող տարածքների միավորումով ստեղծել մեծ համաթուրքական պետության: Երիտթուրքերի նրազած «Մեծ Թուրանի» սահմանները հյուսիսում տարածվելու էին մինչև Ուրալ, իսկ արևելքում՝ Ալթայ, ներառյալ Անդրկովկասի, Հյուսիսային Կովկասի, Դրինի, Պովոլժիեի, Միջին Ասիայի և այլ տարածքներ:

Հայերի ոչնչացման ծրագրի հեղինակներն ու իրագործողներն էին՝ ներքին գործերի նախարար, հետագայում մեծ վեզիր Թալեաթը, ռազմական նախարար Էնվերը, ծովային նախարար և Պաղեստինյան ճակատի հրամանատար Ջեմալը, ֆինանսների նախարար Ջավիդը, երիտթուրքական կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներ, մասնագիտությամբ բժիշկներ Բեհաէդդին Շաքիրը, Նազըմը ու ուրիշներ¹:

Հայերի զանգվածային բնաջնջման երիտթուրքական ծրագիրն առաջին անգամ քննարկվել է դեռևս 1911 թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 9-ը կայացած «Միություն և առաջադիմություն» կուսակցության IV համագումարի նիստերի ընթացքում: Համագումարի փակ նիստում հավանության արժանացավ Օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդների, առաջին հերթին՝ հայերի և հույների բռնի թուրքացման ծրագիրը, որով, ի թիվս այլ միջոցների նախատեսվում էր նաև այդ բնակչության տեղահանությունը և բնաջնջումը ճանապարհին կամ վերաբնակեցման վայրերում²: Մինչ այդ, հաշվի առնելով 1909 թ. կիլիկիահայության կոտորածներից հետո քրիստոնյաների շրջանում երիտթուրքերի նկատմամբ վստահության կտրուկ նվազումը, համագումարը կենտրոնական կոմիտեին հանձնարարում էր այդ ժողովուրդների շրջանում զգոնության թուլացման և կուսակցության նկատմամբ վստահության վերականգնման ուղղությամբ քայլեր ձեռնարկել: Միջանկյալ ծրագրի համաձայն, թուրքերենին տիրապետող որոշ քրիստոնյաներ նահանգային իշխանության մարմիններում պետք է նշանակվեին երկրորդական նշանակության պաշտոնների, քրիստոնյա երեխաները կառավարության հաշվին պետք է ընդունվեին թուրքական դպրոցներ,

¹ Տե՛ս Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատաւարության փաստաթղթերի, առաջաբանը, թարգմ. և ծանոթագր. Ա.Հ. Փափազյանի, Ե., 1988, էջ 14-18:

² Авакян А., Геноцид 1915 г. Механизмы принятия и исполнения решений, Е., 1999, с. 15-16.

քրիստոնյաների զինաթափումն առժամանակ պետք է դադարեցվեր, սակայն զուգահեռաբար պետք է զինվեր մահմեդական բնակչությունը, քրիստոնյաներով բնակեցված տարածքներում մահմեդականների վերաբնակեցման քաղաքականությունը պետք է դադարեցվեր, չխոչընդոտելով, որ այդ վերաբնակիչներն իրենց միջոցների հաշվին տեղափոխվեին նշված տարածքներ¹:

Հայերի բնաջնջման ծրագիրն իրագործելու նպատակով երիտթուրքերը դեռ Առաջին աշխարհամարտից առաջ ստեղծեցին մի մարմին՝ «Հատուկ կազմակերպություն», որը կոչված էր ինչպես համակարգելու ժանդարմերիայի և բանակային ստորաբաժանումների գործողությունները հայերի բնաջնջման գործում, այնպես էլ անմիջական մասնակցություն ունենալու դրանում: Սկզբնական շրջանում «Հատուկ կազմակերպության» անդամները հավաքագրվում էին երիտթուրքական կուսակցության շարքերից և կազմում էին 10.000 հոգի, սակայն հետագայում քրդերի և բանտերից ազատ արձակված հանցագործների հաշվին կազմակերպության անդամների թիվը հասցվեց 30.000-ի²: «Հատուկ կազմակերպության» արևելյան բաժանմունքի ղեկավարումը, որը պատասխանատու էր Արևմտյան Հայաստանի վեց նահանգների հայության բնաջնջման համար, վստահված էր «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտկոմի անդամ Բեհաեդդին Շաքիրին, իսկ կազմակերպության ընդհանուր ղեկավարումն իրականացվում էր ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի կողմից³:

Այսպիսով, Առաջին աշխարհամարտից առաջ երիտթուրքական իշխանությունների կողմից արդեն կայացվել էր հայերին բնա-

¹ Авакян А., *Геноцид 1915 г. Механизмы принятия и исполнения решений*, էջ 17:

² Նույն տեղում, էջ 28:

³ Նույն տեղում, էջ 76–78:

ջնջելու որոշումը, մշակվել էր համապատասխան ծրագիր և ստեղծվել էին այն իրագործելու մեխանիզմները:

1915 թ. հունվարի կեսերին Թալեաթի նախագահությամբ և երիտթուրք պարագլուխներ Նազըմի, Բեհաեդդին Շաքիրի, Էնվերի, Ջավիդի, Հասան Ֆեհմիի և մյուսների մասնակցությամբ հրավիրվում է գաղտնի խորհրդակցություն, որի ընթացքում վերահաստատվում է հայերին բնաջնջելու ծրագիրը: Հանդիպման ժամանակ, որպես «10 պատվիրաններ», ընդունվում են հետևյալ հայտնի որոշումները՝ հայերին հեռացնել բոլոր պետական պաշտոններից, փակել բոլոր հայկական միությունները, սպանել բանակում գտնվող բոլոր հայերին, բռնագրավել հայերի մոտ եղած զենքերը, ոչնչացնել մինչև 50 տարեկան բոլոր տղամարդկանց, հոգևորականներին և ուսուցիչներին, իսկ աղջիկներին և երեխաներին կրոնափոխել, մահմեդական բնակչությանը հրահրել հայերին կոտորելու, տեղահանել բոլոր նրանց ընտանիքներին, ում կհաջողվի փրկվել: Սույն հրահանգները պետք է պահվեին հույժ գաղտնի, իսկ նշված գործողություններն ամենուրեք պետք է սկսվեին միաժամանակ՝ հնարավորություն չընձեռելով հայերին, որ նախապատրաստվեն պաշտպանության:

Որոշումը վերահաստատելուց ու գործողությունները հստակեցնելուց հետո երիտթուրքական իշխանություններն անմիջապես գործի անցան՝ իրագործելու հայերին բնաջնջելու իրենց հանցավոր ծրագիրը²:

¹ Dadrian V.N., *The Secret Young-Turk Ittihadist conference and the decision for the World War I Genocide of the Armenians*, "Holocaust and Genocide Studies", 1993. Vol. 7, N 2, pp. 174–175.

² Марукян А.Ц., *Проблема Геноцида армян в современной геноцидологии*, Е., 2010, с. 30.

2.2. Մեծ եղեռնի առաջին փուլը՝ հայ տղամարդկանց զորակոչն ու ոչնչացումը օսմանյան բանակում

Կայսրության հայ բնակչության բնաջնջումը դյուրացնելու նպատակով մեկուսացվում, ապա ոչնչացվում է հայ տղամարդկանց մեծ մասը: Զորահավաքի ընթացքում օսմանյան բանակ զորակոչվում են 18–45 տարեկան ավելի քան 60 հազար հայեր¹: Տարբեր ռազմաճակատներում նրանք մասնակցում են մարտական գործողությունների: Հայ զինվորներն արժանանում են թուրքական հրամանատարության դրվատանքին և նույնիսկ շնորհակալական հեռագիր է հղվում Վանի վալի Զևդեթ բեյին՝ նահանգից զորակոչված հայերի սխրագործությունների համար²:

Չնայած դրան, թուրքական գլխավոր հրամանատարության 1915 թ. փետրվարի 25-ի հրամանով արգելվում է հայ զինծառայողներին նշանակել հրամանատարական պաշտոններում³: Այս հրամանը հիմք է դառնում, որ սկսվի օսմանյան բանակում ծառայող հայ զինվորների ճնշող մեծամասնության զինաթափումը: ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուն նույնպես հաստատում է, որ հայ զինվորների զինաթափումը սկսվում է 1915 թ. սկզբներին⁴: Նրանց ընդգրկում են բանվորական գումարտակներում՝ իբրև թե թիկունքում ինժեներական աշխատանքներ կատարելու համար: Կան բազմաթիվ վկայություններ թուրքական բանակում ծառայող հայ զինվորների ծանր և անմարդկային պայմանների մասին⁵: Բանվո-

¹ Տե՛ս Մսիսեյան Ռ., Խուռլուկերյան Կ., *Հայերի ցեղասպանությունը տասնամյակների լույսի ներքո*, Ե., 1995, էջ 23:

² Տե՛ս Ussher C.D., Knapp G.H. *An American Physician in Turkey. A Narratives of Adventures in Peace and War*, New York, Boston, 1917, էջ 217:

³ Տե՛ս Yavuz E., *Armenian Claims in the Light of the Historical Documents*, "Turkish Review", Ankara, Spring 1986, Vol. 1, № 3, էջ 26:

⁴ Տե՛ս Morgenthau H., *Ambassador Morgenthau's Story*, N.Y., 1918, էջ 302:

⁵ Տե՛ս *Հովիցերիացիի հույսերի Յագուպ Բիւլնցլեր*. Իր հույսանալստ գործունեության 40-ամեակին առթիւ, Պեյրուր-Հալեպ, 1946, էջ 63:

րական գումարտակներում հայերին և հույներին հանձնարարվում էին առավել ծանր գործերը՝ բեռներ տեղափոխելը, ճանապարհներ և կամուրջներ կառուցելը, խրամատներ փորելը և այլն: Սնունդն անկանոն էր և անորակ, շատ դեպքերում, սովամահ չլինելու համար, նրանք ստիպված էին սնունդ գնել:

Արճեշում կայմակամի հրամանով 3 հազար զինվորների բանտարկեցին զորանոցում: Այն բանից հետո, երբ 100 հոգու դուրս բերեցին ու գնդակահարեցին, մյուսները հարձակվեցին պահակախմբի վրա և կարողացան փախչել¹:

Բոլոր գավառներից լուրեր էին ստացվում այն մասին, որ բանվորական գումարտակներում հարկադիր աշխատանք կատարող հայ տղամարդիկ սպանվում էին մահմեդական զինակիցների կողմից: Սպաների հրամանով զինվորներն և զինվորական ժանդարմները հայ տղամարդկանց 80, 100 մարդուց բաղկացած խմբերով հեռացնում էին խուլ վայրեր և գնդակահարում²:

Մեծ եղեռնի առաջին փուլում հայ տղամարդկանց օսմանյան բանակ զորակոչելով ու ոչնչացնելով, երիտթուրքական իշխանություններն այդպիսով փորձում էին հայերին զրկել ինքնապաշտպանվելու ուժից ու հնարավորությունից, որպեսզի ավելի հեշտությամբ իրականացնեն հայկական բնակավայրերում անպաշտպան մնացած բնակչության տեղահանությունն ու բնաջնջումը³: Պետք է նշել սակայն, որ հայերին, այդուհանդերձ, հաջողվեց դիմել ինքնապաշտպանության այն բնակավայրերում, որոնց բնակչությունը, կանխազգալով հայ տղամարդկանց օսմանյան բանակ տանելու՝

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 438, թ. 2:

² Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու (կազմ. Մ.Գ. Ներսիսյան, Ռ.Գ. Սահակյան, խմբ. Մ.Գ. Ներսիսյան), Ե., 1991, էջ 470:

³ Марукян А.Ա., Проблема Геноцида армян в современной геноцидологии, с. 32.

իշխանությունների իրական նպատակների մասին, հրաժարվեց զդրակոչվել:

2.3. Մեծ եղեռնի երկրորդ փուլը՝ հայ մտավորականության ոչնչացումը

Հաջորդ քայլով երիտթուրքական իշխանությունները սկսում են հայ հասարակական, քաղաքական և կրոնական գործիչների ձերբակալությունները: Հայկական նահանգներ և հայաբնակ շրջաններ են ուղարկվում «Հատուկ կազմակերպության» անդամները, որոնք պետք է ղեկավարեին տեղական իշխանությունների՝ հայերի դեմ ուղղված գործողությունները: Առաջին ձերբակալությունները տեղի են ունենում Ջեյթունում: Հալեպում Գերմանիայի հյուպատոս Վ. Ռյուսլերը 1914 թ. հոկտեմբերի 16-ի զեկուցագրում հաղորդում է, որ Ջեյթունում ձերբակալվել և դաժանորեն խոշտանգվելով սպանվել է Նազարեթ Չաուշը¹: Կալանավորվում են գյուղաքաղաքի ևս 60 և շրջակա գյուղերի 30 հայ աչքի ընկնող ներկայացուցիչներ²: Դեկտեմբերի 18-ին սպանվում է Սեբաստիայի նահանգի առաջնորդական տեղապահ Սահակ ծ. վարդապետ Օդապաշյանը³:

Նահանգապետ Ջնդեթ բեյը 1915 թ. ապրիլի սկզբներին դավադրորեն հաշվեհարդար է տեսնում Վասպուրականում մեծ հեղինակություն վայելող ՀՅԴ գործիչներ Իշխանի (Նիկոլ Պողոսյան) և Վոամյանի (Օնիկ Դերձակյան) հետ: Ջնդեթի լարած որոգայթից փրկվում է Արամ Մանուկյանը, որը դառնում է Վանի ինքնապաշտպանության ղեկավարը: Ձերբակալվում և Վանի բանտում սպան-

¹ Stü Lepsius Joh., *Deutschland und Armenien 1914–1918*. Sammlung diplomatischer Aktenstücke, Potsdam, 1919, էջ 21:

² Stü Պողոսյան Հ.Մ., *Չլյթունի պատմություն*, Ե., 1969, էջ 386:

³ Stü «Ժողովուրդ», Ղալաթիա (Կ. Պոլիս), 1918, 14/27 դեկտեմբեր:

վում են հնչակյաններ Ասոն (Տիգրան Օտյան), Աբրահամ Բրուսյանը, Արտաշես Սուխյանը և Կարապետ Տանթյանը¹:

Հայ մտավորականությանը հիմնական հարվածը հասցվում է 1915 թ. ապրիլի 24-ին և հաջորդ մի քանի օրերին Կ. Պոլսում և հայաբնակ այլ բնակավայրերում: Վաղօրոք կազմված ցուցակների համաձայն ոստիկանությունը կալանում է 800-ից ավելի², իսկ թուրքական աղբյուրի համաձայն՝ 2.345 հայերի³: Նրանց թվում էին օսմանյան խորհրդարանի պատգամավորներ Գրիգոր Զոհրապը, Վարդգես Մերենկյույանը և Վոսմյանը, բանաստեղծներ Սիամանթոն (Ատոմ Յարճանյան), Դանիել Վարուժանը, Ռուբեն Սևակը, Արտաշես Հարությունյանը, գրողներ, հրապարակախոսներ և լրագրողներ Երովսանը (Երվանդ Սրմաքեշխանյան), Ռուբեն Զարդարյանը, Սմբատ Բյուրատը, Թվկատինցին (Հովհաննես Հարությունյան), Գեղամ Բարսեղյանը, երգահան Կոմիտասը (Սողոմոն Սողոմոնյան), դերասան Ենովք Շահենը, նկարիչ Հրանտ Աստվածատրյանը, բժիշկ Նազարեթ Տաղավարյանը, գիտնականներ Տիրան Քելեքյանը, Գագիկ Օզանյանը և շատ ու շատ ուրիշներ:

Մայրաքաղաքից աքսորված հայ մտավորականների մեծամասնությունը դաժանորեն սպանվում է տարագրման ճանապարհին: Քչերին է հաջողվում գոյատևել, որոնցից էին՝ նկարիչ Արամ Անտոնյանը, հրատարակիչ Թեոդիկը, երգիծաբան Երվանդ Օտյանը և ուրիշներ: Նշանավոր երգահան Կոմիտասը բռնագաղթի ժամանակ ականատես լինելով հայության դժոխսային տառապանքներին, կորցնում է բանականությունը:

Հունիսի 15-ին Կ. Պոլսում հրապարակավ կախաղան են բարձրացվում հնչակյան կուսակցության 20 նշանավոր գործիչներ՝ Փա-

¹ Տէ՛ս Թէոդիկ, *Յուշարձան նահապետիկ մտատրուականության*, Ե., 1990, էջ 20–41:

² Տէ՛ս Սահակյան Ռ., *Խոռոչներ* Կ., նշվ. աշխ., էջ 24:

³ Տէ՛ս Beylerian A., *Les Grandes Puissances, L' Empire Ottoman et les Arméniens dans les Archives Françaises*, 1914–1918, Paris, 1983, էջ 21:

րամազը (Մատթեոս Սարգսյան), Վանիկը (Գեղամ Վանիկյան), Ռուբեն Կարապետյանը և ուրիշներ: Նրանք մահապատժի են ենթարկվում երիտթուրքական իշխանությունների կողմից ներկայացված կեղծ ամբաստանությունների հիման վրա:

Հայ մտավորականության ձերբակալման ու հետագա ոչնչացման գործընթացը միայն մայրաքաղաքով չսահմանափակվեց, այլ իրականացվեց նաև Արևմտյան Հայաստանում և կայսրության հայաբնակ այլ տարածքներում:

Ուրֆայում հայ մտավորականության սպանություններն իրականացնում են «Հատուկ կազմակերպության» անդամներ Չերքեզ Ահմեդը և Հալիլը, որոնց կողմից ձերբակալվում և սպանվում են 100-ից ավելի հայեր¹: Մայիսի 9-ին Մալաթիայում տեղի ունեցան զանգվածային ձերբակալություններ: Կալանավորվեցին առաջնորդական փոխանորդը, գավառական ժողովի անդամները, կուսակցական աչքի ընկնող ներկայացուցիչներ՝ թվով 1.300 հոգի²: Ամբողջ կայսրությունում ձերբակալված հայ մտավորականների թիվը կարճ ժամանակում հասավ 2345-ի³:

Հայ տղամարդկանց օսմանյան բանակ զորակոչելուն ու ոչնչացնելուն գլուգահեռ Մեծ եղեռնի երկրորդ փուլում հայ մտավորականներին ձերբակալելու ու ոչնչացնելու միջոցով երիտթուրքական իշխանությունները հայերին գրկեցին ազգային ընտրանուց, վախենալով, որ վերջինս կարող է ծախողել հայերին բնաջնջելու կառավարության հանցավոր ծրագիրը:

¹ St'eu Künzler J., *Im Lande des Blutes und der Tränen. Erlebnisse in Mesopotamien während des Weltkrieges*, Potsdam, 1921, էջ 28:

² St'eu ՀԱԱ. ֆ. 227, ց. 1, գ. 453, թ. 7–8:

³ St'eu Halacoglu Yu., *Die Armenien frage*, Klagenfurt-Wien-Ljubljana-Sarajevo, 2006, էջ 60:

2.4. Մեծ եղեռնի երրորդ փուլը՝ հայ բնակչության բռնի տեղահանությունն ու կոտորածները

Արևմտահայերի զանգվածային բռնագաղթն ու կոտորածը փաստորեն սկսվում է Զեյթունի հայ բնակչության տարագրությամբ: 1915 թ. մարտի 26-ից փուլ առ փուլ սկսվում է Զեյթունի և հյամանուն գավառակի հայության բռնագաղթը: Տարագրվում են 30 հազարից ավելի հայեր¹: Նրանց հետևում է Լեռնային Կիլիկիայի մյուս բնակավայրերի հայերի բռնագաղթը:

Ամբողջ կայսրությունով արդեն իսկ ընթացող հայերի զանգվածային տեղահանություններին ու կոտորածներին «օրինական» տեսք տալու նպատակով ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի նախաձեռնությամբ երիտթուրքերի կառավարությունը 1915 թ. մայիսի 30-ին ընդունեց «Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքը²:

Խլաթի 19 հայկական գյուղերի տղամարդիկ սպանվում են թուրք և քուրդ հրոսակների կողմից: 9 հազարից ավելի կանայք ու երեխաներ թշվում են Բաղեշ, ապա Սղերդ, որտեղ բոլորին կոտորում են: Նույն բախտին են արժանանում Խնուսի 26 հայկական գյուղերի բնակիչները³:

Էրզրումի նահանգի աքսորականների մի մասը նույնիսկ տարագրման վայր չի հասնում: Նրանց շրջափակում են ամայի մի վայրում, թողնում առանց ջրի ու պարենի և դատապարտում սովամահության: Չնայած ուղեկցող թուրք ժանդարմների ներկայությանը՝ աքսորականները ենթարկվում են քրդական ելուզակախմբերի հարձակմանը: Հայերից մի քանիսն իրենք են նախահարձակ լի-

¹ Տե՛ս Պողոսյան Հ.Մ., *Չկյթունի պատմություն*, Ե., 1969, էջ 402:

² Տե՛ս Մեվլան Չաղե Ռ-իֆաթ, *Օսմանեան հեղափոխության մուսթ ծալքերը և Իթթիհատի հայաթինջ ծրագրերը*, Ե., 1990, էջ 119-120:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 109, թ. 101:

նում, ջարդարարներից խլում զենքը, սակայն զոհվում են անհավասար կռվում¹:

Էրզրումում իշխանությունները չեն աքսորում միայն օսմանյան բանակի համար պատվերներ կատարող մոտ 50 հայ արհեստավորների, սակայն 1916 թ. փետրվարին Էրզրումից թուրքերի նահանջի ժամանակ այդ արհեստավորները նույնպես սպանվում են²:

Վան քաղաքում և նահանգում ոճիրներ գործելուց հետո Ջևհերբեյն իրականացնում է Բիթլիսի 15 հազար հայության ջարդը³: Ահավոր վայրագություններ և զանգվածային սպանություններ են տեղի ունենում Մուշում և համանուն դաշտի հայկական գյուղերում:

Սեբաստիայի նահանգում սկսվում է հայերի տեղահանությունը, Դենդիլ հայկական գյուղի բնակիչները վճռում են չենթարկվել: Նրանք բարձրանում են մոտակա լեռը և դիրքեր գրավում: Այստեղ ժամանած թուրքական կանոնավոր բանակի ստորաբաժանումները մոտ վեց շաբաթ ապարդյուն գրոհում են: Նույնիսկ հրետանին չի կարողանում կոտրել հայերի դիմադրությունը: Միայն այն բանից հետո, երբ փակվում է դեպի ինքնապաշտպանները հոսող ջրի ճանապարհը, հայերը հարկադրված են լինում տեղի տալ, և դիմադրությունը ճնշվում է⁴:

Հարազատ բնակավայրից մի քանի կիլոմետր հեռանալուց հետո հայերի մոտ եղած թանկարժեք իրերն ու դրամն անմիջապես կողոպտվում էր քարավանն ուղեկցող ժանդարմների կողմից: Հայերի տների, խանութների, արհեստանոցների շարժական գույքն էլ նրանց հեռանալուց հետո թալանվում էր տեղի մահմեդական բնակչության կողմից, իսկ անշարժ գույքը, որն իբրև ի պահ էր

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 138, թ. 1:

² Տե՛ս նույն տեղում, գ. 56, թ. 38:

³ Տե՛ս *Геноцид армян в Османской империи*. Էջ 498:

⁴ Տե՛ս Գալուստյան Կ., Գաբիկեան Մ., *Ազ-Տադի քառամյալ գոյամարտը*, Մարսկյ, 1932, էջ 35:

հանձնվում իշխանություններին, գործնականում բռնազավթվում էր թուրքական պետության կողմից¹:

Հայ աքսորականների քարավանների տեղահանության երթուղիներն ընտրված էին այնպես, որ նրանք անցնեին թշնամաբար տրամադրված մահմեդականներով բնակեցված բնակավայրերով: Հենց այդ բնակավայրերի մոտ էլ գիշերային կանգառներ էին արվում, ինչից հետո մահմեդականներին հարձակման ազդանշան էր տրվում, որոնք հարձակվում էին հայերի վրա՝ նրանց ենթարկելով սպանդի, բռնությունների ու թալանի: Հայերի քարավանները ուղեկցող և նրանց անվտանգությունն իբր թե ապահովող ժանդարմները լավագույն դեպքում հանգիստ հետևում էին, իսկ երբեմն էլ միանում էին հարձակվողներին, քանզի նրանց առջև իրականում խնդիր էր դրված ոչ թե պաշտպանել, այլ ոչնչացնել տեղահանվողներին²:

Կայսրության մի շարք հարավային քաղաքներ, ինչպես Դամասկոսը, ուր հասնում էին հայերի «մահվան քարավանների» վերջին մնացորդները, վերածվել էին ստրկավաճառական շուկաների, որտեղ իրականացվում էր հայ կանանց ու աղջիկների բռնի վաճառքը մահմեդականներին³:

Մեծ եղեռնի երրորդ փուլում տեղահանության անվան տակ իրականացվում էր հարազատ բնօրրանից հայ բնակչությանը դեպի օտար, թշնամական միջավայր բռնագաղթեցնելու և այնտեղ նրա զանգվածային բնաջնջման գործընթացը: Դրան զուգահեռ իշխանություններն ու տեղի մահմեդական բնակչությունը յուրացնում էին տեղահանված հայերի շարժական և անշարժ գույքը:

¹ Աստույան Ա., *Դարի Կոտորուտոր. Հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրությունում 1914–1923 թթ.*, Ե., 2013, էջ 36–37:

² Авакян А., *Геноцид 1915 г. Механизмы принятия и исполнения решений*, с. 91.

³ Sliu Beylerian A., նշվ. աշխ., էջ 206:

2.5. Մեծ եղեռնի չորրորդ փուլը՝ ողջ մնացած հայության ոչնչացումը Սիրիայի և Միջագետքի համակենտրոնացման ճամբարներում

Երիտթուրքական կառավարության հրամանի համաձայն՝ հայ տարագիրների «մահվան քարավանները» քշվում էին դեպի Միջագետքի և Սիրիայի՝ Ռաս-ուլ-Այնի, Դեյր էլ-Զորի, Մեսքենեի, Ինթիլի, Ռաբբայի և այլ համակենտրոնացման ճամբարներ:

Երիտթուրքերի հայաջինջ քաղաքականությունը այս ճամբարներում պետք է ավարտեր բնությունը: Այս անապատները թուրքական իշխանությունների կողմից պատահական չէին ընտրված: Ականատեսների վկայությամբ հրաշքով ողջ մնացած հայերն այստեղ դանդաղ և տանջալից մահանում էին շիկացած ավազուտներում՝ առանց սննդի և ջրի, համաճարակային հիվանդությունների պայմաններում¹:

Դեյր էլ-Զորի ճամբարը առավելագույն թվով հայերի կյանք խլեց: Հալեպում ամերիկյան հյուպատոս Ջեքսոնի հաշվարկներով, այստեղ իրենց մահկանացուն կնքեցին շուրջ 300 հազար հայեր²: Հայ նահատակների քանակով երկրորդը Ռաս-ուլ-Այնի ճամբարն էր, որտեղ ոչնչացվեց մոտ 70.000 մարդ, երրորդը՝ Մեսքենեն էր; որտեղ նահատակվեց շուրջ 55.000 հայ, հաջորդը՝ Ինթիլին էր, որտեղ սպանվեց 40–50 000 հոգի³:

Սակայն հայերի ոչնչացման այս տեմպերը չէին գոհացնում երիտթուրքերին. նրանց հարկավոր էր մինչև պատերազմի վերջը ավարտին հասցնել իրենց հանցավոր քաղաքականությունը և Միջագետքի անապատներում թաքցնել դրա հետքերը: Տեղեկանալով,

¹ Гамелен А., Брон Ж.-М. Восстановленная память, Е., 1995, с. 34.

² Տե՛ս Սահակյան Ռ., Խուռավերդյան Կ., նշվ. աշխ., էջ 29–30:

³ Авакян А., Геноцид 1915г. Механизмы принятия и исполнения решений, с. 94–95.

որ աքսորավայրերում ողջ են մնացել հայ տարագիրներ, օսմանյան կառավարության հրամանով տեղի մահմեդական բնակչությունից սկսեցին կազմավորվել հասուկ ջոկատներ, որոնց վստահվեց նշված ճամբարներում դեռևս ողջ մնացած հայերի ոչնչացման գործը¹։ Հասուկ ուշադրություն էր դարձվում այն հանգամանքին, որ ճամբարներ հասնող հայերի թիվը չգերազանցի այդ տարածքներում բնակվող մահմեդականների ընդհանուր թվի 10 տոկոսը։ Երբ այդ շեմը գերազանցվում էր, հրահանգ էր տրվում առժամանակ դադարեցնել հայ տարագիրների հոսքը մոլյալ ճամբար, որպեսզի տեղի մահմեդականներից կազմավորված ջոկատները այդ ընթացքում հասցնեին ոչնչացնել նախորդ քարավաններով տեղ հասած հայ տարագիրներին։

2.6. Վանի հերոսական ինքնապաշտպանությունը

Թուրքական իշխանություններին, սակայն, ոչ բոլոր բնակավայրերում հաջողվեց անխափան իրագործել հայերին բնաջնջելու իրենց հրեշավոր ծրագիրը։ Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայի հայաբնակ մի շարք վայրերում հայ բնակչությունը հերոսական դիմադրություն ցույց տվեց թուրք և քուրդ ջարդարարներին։ Առաջին կազմակերպված ինքնապաշտպանական կոփվները տեղի ունեցան Վանի նահանգի հայկական բնակավայրերում։

Առավել ծանր մարտեր էին տեղի ունենում Վան քաղաքում։ 1914 թ. սկզբներին Վանում բնակիչների թիվը հասնում էր 41 հազարի, որից 23 հազարը հայ, իսկ 18 հազարը՝ մահմեդական։ Քաղաքի հայությունը բնակվում էր Այգեստան (20 հազար հոգի) և Քաղաքամեջ (2500 հոգի) թաղամասերում։ Նրանք գտնվում էին միմ-

¹ Авакян А., *Геноцид 1915г. Механизмы принятия и исполнения решений*, էջ 93։

յանցից 5–6 կմ հեռավորության վրա: Այդ միջանկյալ տարածքում ապրում էին հիմնականում թուրքեր¹:

Նահանգում տիրող վիճակը, Վոսմյանի և Իշխանի սպանությունները հարկադրում են հայությանն ուղիներ փնտրել՝ ջարդից փրկվելու համար: 1915 թ. ապրիլի 5-ին Այգեստանում կազմվում է «Վանի հայ ինքնապաշտպանության գինվորական մարմին»: Նրա կազմում սկզբնապես մտան նախկին արմենական, սահմանադիր ռամկավար Արմենակ Եկարյանը և դաշնակցականներ Կայծակ Առաքելն (Տիգրան Աբաջյան) ու Գրիգոր Բուլարացին (Գրիգոր Կյոզեյան), իսկ հետագայում Զինվորական մարմնի կազմում ընդգրկվեցին անկուսակցական Փանոս Թերլեմեզյանը և դաշնակցական Արամ Մանուկյանը²: Ժամանակակիցները, ինչպես նաև հակառակորդը, Վանի ինքնապաշտպանության գլխավոր կազմակերպիչը և ոգին համարում էին Արամ Մանուկյանին³:

Այգեստանը բաժանվում է յոթ պաշտպանական շրջանների՝ 79 դիրքերով և 1053 մարտիկներով, իսկ թուրքական ուժերի թիվը հասնում է 12 հազարի: Հակառակորդն ուներ նաև մի քանի տասնյակ թնդանոթներ: Հետագայում էրզրումից ուղարկվեց ևս երկու գումարտակ զորք և չորս լեռնային թնդանոթ⁴:

Վանի ինքնապաշտպանությունը սկսվում է ապրիլի 7-ի վաղ առավոտյան: Թուրքական հրետանին սկսում է ռմբակոծել Այգեստանը: Հակառակորդը մի շարք շրջաններում հարձակումներ է ձեռնարկում, սակայն զգալի կորուստներ կրելով՝ նահանջում է: Հայ մարտիկների կազմակերպած հակահարվածի հետևանքով թուրքերի շրջանում խուճապ է առաջանում:

¹ Տե՛ս Ա-Դօ, *Մեծ դեպքերը Վասպուրականում 1914–1915 թվականներին*, Ե., 1917, էջ 222:

² Տե՛ս Յուշեր Արմենակ Եկարյանի, Գահիրե, 1947, էջ 192:

³ Տե՛ս *Геноцид армян в Османской империи*, էջ 288:

⁴ Տե՛ս Lepsius Joh., *Deutschland und Armenien*, էջ 484:

Խզվում է կապը քաղաքի հայերով բնակեցված երկու թաղամասերի՝ Այգեստանի և Քաղաքամեջի միջև։ Քաղաքամեջում նույնպես ստեղծվում է Զինվորական մարմին, որը թաղամասը բաժանում է պաշտպանական չորս շրջանների՝ 25 դիրքերով։ Ապրիլի 7-ին հակառակորդի առաջին հարձակումը հետ է շարտվում։ Առաջին օրվա կռիվների ընթացքում հակառակորդն ունեցավ 60-70 սպանված և մոտ 80 վիրավոր¹։

Ապրիլի 21-ի երեկոյան Ջևդեթը երկու բանագնացների միջոցով հայերին առաջարկում է հանձնվել։ Օսմանյան բանակում ծառայող ծագումով վենեսուելացի գերմանական սպա Ռաֆայել դե Նոգալեսի խոստովանությամբ՝ նահանգապետի նպատակն էր՝ պաշտպաններին խաբեությամբ դուրս բերել քաղաքից և ոչնչացնել, սակայն հայերը մերժում են այդ առաջարկը²։

Ապրիլի 25-ից 26-ը Ջևդեթի հրամանով Քաղաքամեջ են քշում Վանի շրջակա գյուղերի ողջ մնացած հայ կանանց ու երեխաներին՝ նպատակ ունենալով ուժեղացնել սննդամթերքի ճգնաժամը։ Մայիսի 4-ին տեղի է ունենում Վանի երկու թաղամասերի՝ Այգեստանի և Քաղաքամեջի հայ բնակիչների հանդիպումը։

Էրզրումում Գերմանիայի փոխիյուպատոս Շոյբներ-Ռիխտերի տվյալներով Վանի ինքնապաշտպանության ընթացքում թուրքերի մարդկային կորուստները կազմեցին 1000, իսկ հայերինը՝ 300 մարդ³։ Պաշարման ընթացքում Այգեստանի վրա 10 հազարից ավելի արկ է արձակվել⁴։

¹ Տե՛ս «Վան-Տոսպ», 1916, 19 հունիսի, № 30, էջ 12։

² Տե՛ս Nogales R. de, *Four Years Beneath the Crescent*, (Trans. from Spanish by M. Lee, with an Introduction by Lieutenant-Colonel E. Davis), N. Y. – London, 1926, էջ 90։

³ Տե՛ս Lepsius Joh., *Deutschland und Armenien*, p. 65.

⁴ Տե՛ս Bryce J., *The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916*, London, 1916, p. 38.

Վանի ինքնապաշտպանությունը շարունակվեց մինչև մայիսի 16-ը, երբ թուրքերը նահանջեցին՝ տեղեկանալով, որ ռուսական զորքն ու հայ կամավորականները մոտենում են քաղաքին:

Այսպիսով, Վանի 1915 թ. հերոսական ինքնապաշտպանությունը՝ պսակվեց փառահեղ հաղթանակով՝ կոտորածից փրկելով բազմահազար վանեցիների:

2.7. Մուսալեոցիների հերոսական ինքնապաշտպանությունը

1915 թ. հուլիսի վերջերին երիտթուրքական իշխանությունները պահանջում են Միջերկրական ծովի հյուսիս-արևելքում ընկած Սուետիա գավառակի հայությանը՝ տարագրվել: Սուետիան բաղկացած էր վեց հայկական գյուղերից՝ Քաբուսիե, Վակըֆ, Հաջի Հաբիբի, Յողունօլուք, Խըդրբեկ և Բիթիաս: Բնակիչների մեծ մասը վճռում են չենթարկվել հրամանին և բարձրանալ մոտակա Մուսալեոլ՝ իրենց հետ տանելով անհրաժեշտ իրեր և տնային կենդանիներ: Միայն Քեսաբի 8-10 ընտանիքներ, Բիթիաս և Հաջի Հաբիբի գյուղերի բնակիչների զգալի մասը, խաբվելով իշխանությունների սին խոստումներից, ենթարկվում են տարագրության: Հալեալում Ավստրո-Հունգարիայի հյուպատոս Դանդինին հետազայում հայտնում է, որ նշված գյուղերի շուրջ 3 հազար հայեր կոտորվեցին օսմանյան զորքերի կողմից¹:

Մինչև օգոստոսի 3-ը թուրքական իշխանությունները՝ սուետիահայությունից մի քանի անգամ պահանջում են տեղահանվել, սակայն, հայերը ուշադրություն չեն դարձնում և տենդագին նախա-

¹ Տե՛ս *The Armenian Genocide. History. Politics. Ethics.* Edited by R.G. Hovannisian, New Brunswick, 1991, p. 255.

պատրաստվում են ինքնապաշտպանության: Լեռ են բարձրանում Սուետիայի հայկական վեց գյուղերի 6311 բնակիչներից՝ 4231-ը¹:

Օգոստոսի 7-ին տեղի է ունենում առաջին մարտը: Թուրք զինվորները՝ մոտ 200 հոգի, առանց պատշաճ հետախուզության, առաջանում են դեպի հայկական դիրքերը: Օսմանյան սպաները հայտարարել էին, որ մեկ օրում հաշվեհարդար կտեսնեն հայերի հետ, սակայն հակառակորդի գրոհը հետ է մղվում մուսալեոցիների կողմից: Ձախողվում է նաև թուրքերի՝ օգոստոսի 10-ի հարձակումը: Հայերն, անցնելով հակահարձակման, ստիպում են թշնամուն նահանջել²: Օգոստոսի 19-ին հակառակորդը մի քանի ուղղություններով անցնում է լայնածավալ հարձակման: Թուրքական հրետանու կրակը զգալիորեն նպաստում է նրանց առաջխաղացմանը: Կատաղի և երկարատև մարտերից հետո զգալի կորուստներ կրած հակառակորդը դադարեցնում է հարձակումը: Չնայած հայերի մարտական հաջողություններին՝ իրադրությունը մնում է սպառնալի: Լեռան վրա ապաստանածներին սպասվում էր սովամահություն: Բացի այդ՝ հակառակորդը լրացուցիչ ուժեր էր բերել, զորքի թվաքանակը հասցրել էր 15 հազարի³: Սուետիահայերի համար փրկության միակ ելքը Միջերկրական ծովն էր, որտեղ պարեկություն էին կատարում բրիտանական և ֆրանսիական ռազմանավերը: Նրանց ուշադրությունը գրավելու նպատակով, հայերը պատրաստում են երկու դրոշակ: Առաջինի վրա ասեղնագործված էր մեծ կարմիր խաչ, իսկ մյուսի վրա անգլերեն գրված էր. «Քրիստոնյաները վտանգի մեջ են»: Սեպտեմբերի 5-ին ֆրանսիական «Գիշեն» հաճանավն անսպասելիորեն հայտնվում է Մուսա լեռան ափամերձ

¹ Տե՛ս Գաապարյան Ռ. Հ., *Հայկական կոստրածները Կիլիկիայում (XIX դարի 90-ական թթ. – 1921 թ.)*, Ե., 2005, էջ 126:

² Անդրեասեան Տ., *Չիյթունի անձնատուությունը և Սուետիոյ ինքնապաշտպանութիւնը*, Գահիրէ, 1915, էջ 38:

³ Տե՛ս Գաապարյան Ռ. Հ., նշվ. աշխ., էջ 136:

ջրերում: Ֆրանսիական ռազմանավի նավապետը խոստանում է ութ օրից օգնության հասնել հայերին:

Սեպտեմբերի 7-ին հակառակորդը ձեռնարկում է լայնածավալ և հուժկու հարձակում, որը շարունակվում է մինչև երեկո, սակայն ոչ մի արդյունք չի ունենում, իսկ սեպտեմբերի 10-ին հասնում է բաղձալի օգնությունը: Երկու օրվա ընթացքում կանայք, երեխաները և ծերունիները տեղափոխվում են նավերը, իսկ տղամարդիկ այդ ժամանակ շարունակում էին մնալ դիրքերում՝ ապահովելով նրանց անվտանգ տարահանումը: Ընդհանուր առմամբ՝ փրկվում են 4058 սուետիահայեր, որոնք տեղափոխվում են Եգիպտոսի Պորտ Սաիդ քաղաքը¹:

Սուետիայի հայ բնակչության ինքնապաշտպանությունն իր արտացոլումն է գտել ավստրիացի նշանավոր գրող Ֆրանց Վերֆեյի «Մուսա լեռան 40 օրը» հայտնի վեպում:

Վանում, Մուսա լեռում, ինչպես նաև Շապին Գարահիսարում², Ուրֆայում³ և այլ բնակավայրերում հայերի իրարից անջատ կազմակերպված ինքնապաշտպանական մարտերի արդյունքում որոշակիորեն հաջողվեց ձախողել Արևմտյան Հայաստանում ու Օսմանյան կայսրության հայաբնակ այլ տարածքներում բնակվող հայությանն իսպառ բնաջնջելու՝ թուրքական իշխանությունների ծրագրերը:

¹ Տե՛ս Lepsius Joh., *Deutschland und Armenien 1914–1918: Sammlung diplomatischer Aktenstücke*. Potsdam 1919, p. 467.

² Տե՛ս Տէր-Հարությունեան Հ., *Շապին-Գարահիսարի ապստամբությունը*, Թիֆլիս, 1917:

³ Տե՛ս Սահակեան Ա., *Դիցազնական Ուրֆան և իր հայրդիները*, Պէյրուք, 1955:

2.8. Արևմտահայ հաղթականների վերադարձը և երկրի վերաշինումը 1917 թ.

Կովկասյան ռազմաճակատում ռուսական զորքերի հաջողությունները հնարավորություն տվեցին հայ փախստականներին վերադառնալ իրենց բնակավայրերը և նախաձեռնել գյուղատնտեսական աշխատանքներ: Ալաշկերտ են գալիս հիմնականում տղամարդիկ, որոնց թիվը հասնում է վեց հազարի¹: Կանայք ու երեխաները վերադառնալու էին այն ժամանակ, երբ հնարավոր լիներ նրանց ապահովել պարենով և բնակարանով: Վերադարձողները բնակություն են հաստատում ինչպես իրենց, այնպես էլ այլ լքված հայկական բնակավայրերում, որտեղ տները հիմնականում քանդված էին, հայերի ունեցվածքը թալանված, ընտանի կենդանիներն էլ մահմեդականների կողմից թշվել-տարվել էին: Այս իրողությունները չափազանց դժվարեցնում էին հայ գաղթականների վերաբնակեցումն այդ բնակավայրերում:

Հայկական բարեգործական կազմակերպությունները և առաջին հերթին «Գյուղատնտեսական ընկերությունը» զգալի վերականգնողական աշխատանքներ է նախաձեռնում Ալաշկերտի հովտում, վերաբնակիչներին տրամադրելով երկրագործական գործիքներ, սերմացու, ընտանի կենդանիներ, որոշ բնակավայրերում հիմնելով սննդակայաններ, դպրոցներ, հիվանդանոցներ և այլն:

1915 թ. աշունից մինչև 1917 թ. որոշակի ընդմիջումներով, Վան-Վասպուրականում զգալի վերականգնողական գործունեություն են ծավալում ոչ միայն հայկական, այլև ռուսաստանյան, ամերիկյան և մասամբ բրիտանական բարեգործական, կրոնական և հասարակական կամակերպություններն ու ընկերությունները: Վանի նահանգում կատարված աշխատանքները, ի համեմատություն

¹ ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 379, թ. 33:

Արևմտյան Հայաստանի այլ վայրերի, առավել ծավալուն և լիարժեք էին: Վան-Վասպուրականում բարեգործական կազմակերպությունները շարունակում էին իրենց աշխատանքներն անգամ Վանից ուսական զորքերի մի քանի նահանջներից հետո: Ակնհայտ էր, որ նրանց ունեցած միջոցներն ու հնարավորությունները բավարար չէին լուծելու և ապահովելու Վանի նահանգում վերաբնակվող հայության բոլոր պահանջները: Այնուամենայնիվ, 1916 թ. վերջին և 1917 թ. սկզբին այդ աշխատանքները տալիս են առաջին դրական արդյունքները՝ հայ գաղթականները վերադառնում և սկսում են վերականգնել իրենց տներն ու տնտեսությունները:

1916 թ փետրվարի 3-ին ուսական զորքերի կողմից Էրզրումի գրավումից հետո այստեղ իրենց գործունեությունն են ծավալում Ռուսաստանի Քաղաքների միությունը, Կարինի հայ փախստականների և Մոսկվայի հայկական կոմիտեները¹: Հայ առաքելական եկեղեցին, բարեգործական և հասարակական ընկերությունները նույնպես սկսում են քայլեր ձեռնարկել Էրզրումի և նահանգի ողջ մնացած հայ բնակչությանն օգնելու համար²:

Ի տարբերություն Վանի և Ալաշկերտի, Էրզրումում գործող հայկական կազմակերպությունները առաջին հերթին քայլեր են ձեռնարկում վերացնելու ուսական զինվորական իշխանությունների՝ վարակիչ հիվանդությունների չտարածման հանգամանքով պայմանավորված Էրզրում մտնելու արգելքը: Էրզրում են գործուղվում հայ հասարակական և քաղաքական նշանավոր գործիչներ Ռոստոմը և Յ. Զավրիևը, որոնց հանձնարարվում է տեղում կազմակերպել ողջ մնացած հայերի փրկությունը, ինչպես նաև թուրքերի և քրդերի ընտանիքներում բռնի պահվող հայ կանանց և երեխաների ազատման բարդ և դժվարին գործը: Նրանց հաջողվում է

¹ Տե՛ս «Армянский вестник», 1917, N 4, 22 января, с. 17.

² Տե՛ս նույն տեղում:

մոտ չորս հազար հայերի խումբ-խումբ տեղափոխել Էրզրում: Ի վերջո, հայ հասարակական-քաղաքական շրջանները ստանում են ռուսական զինվորական իշխանությունների թույլտվությունը և ցեղասպանությունից փրկված հայերին բնակեցնում լքված գյուղերում: Հիմնվում են սննդակայաններ, հիվանդանոցներ, որբանոցներ և այլն: Էրզրումում հիմնված պարենային պահեստը մթերք է հատկացնում տեղի որբանոցին, որտեղ 1917 թ. մարտի 27-ի դրությամբ որբերի թիվը 136 էր: Մուշ վերադառնալու ցանկություն են հայտնում Կովկասում գտնվող 130 մշեցիներ, որոնք, հիմնավորվելով Մուշում, մեծ օժանդակություն են ցույց տալիս գործող գաղթականական մարմիններին: Ինչպես Էրզրումի, այնպես էլ Սասունի և Մուշի հայությունը կրել էր ահռելի մարդկային և նյութական կորուստներ: Բարեգործական կազմակերպությունների համար առաջնահերթը՝ վերաբնակեցված հայության համար գոյության տարրական պայմանների ստեղծումն էր և քրդական գերության մեջ գտնվող հայրենակիցների ազատումն էր: Հիմնվում են բնակչության տարրական կենսապայմաններն ապահովող հաստատություններ՝ սննդակայաններ, խանութ-պահեստներ, հիվանդանոցներ և այլն:

Արևմտյան Հայաստանի գրավված տարածքներից ռուսական բանակի հեռանալուց և 1918 թ. փետրվարին թուրքերի հարձակման անցնելուց հետո այդ տարածքներում ոչ միայն այլևս հնարավոր չէր շարունակել վերաշինական աշխատանքները, այլև, վերահաս վտանգից ելնելով, վերադարձած հայությունը կրկին ստիպված է լինում գաղթել իր բնակավայրերից:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 1918-1922 ԹԹ.

3.1. Ախալքալաքի գավառի հայության 1918 թ. կոտորածները

1918 թ. մարտ-ապրիլին Վեհիբ փաշայի զորքերի հարձակումից և հատկապես Կարսի մարզի գրավումից հետո, Ախալքալաքի վիճակը խիստ ծանրացավ: Թուրքերի կողմից բռնագրավված տարածքներից նորանոր հայ գաղթականներ հաստատվեցին այստեղ: Ախալքալաքցիները կարողացան բանակցությունների մեջ մտնել թուրքական զինվորականության և Արդահանի մահմեդականների ներկայացուցիչների հետ և Արդահանի ու Օլթիի գավառների 1500 հայ բնակիչների՝ հիմնականում կանանց ու երեխաների, փոխանակել իրենց գավառի Կոկիա, Թոք և թուրքական այլ գյուղերի բնակիչների հետ¹:

Հենվելով տեղերում ձևավորված ռազմական, ազգային ու քաղաքացիական մարմինների վրա՝ Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը, հակառակ Վրաց ազգային խորհրդի ձգտումներին, կարողացավ վիճելի համարվող Ախալքալաքի և Բորչալուի գավառների վրա տարածել իր ազդեցությունը²: Շուտով Ախալքալաք ուղարկվեց

¹ Տե՛ս Մելքոնյան Ա., *Չափադրը 19-րդ դարում և 20-րդ դարի ստացին քառորդին*, Ե., 2003, էջ 273:

² Տե՛ս Զամալյան Ա., *Հայ-վրացական կոնֆլիկտ*, Հայրենիք, 1928, էջ 89:

գնդապետ Առաքելովը, տեղում սկսվեց հայկական զինված խմբերի կազմավորման գործը¹:

Շիրակ-Աշոցքի գրավումից հետո թուրքական մի զորաջոկատ հարավից շարժվեց դեպի Ախալքալաքի գավառ: Թշնամին Ջավախք ներխուժեց նաև հարավ-արևմուտքից՝ Չլդըրի կողմից, 1918 թ. մայիսի 7-ին (20)²: Ախալքալաքում տեղի բնակչությունից կազմավորված փոքրաթիվ ու վատ զինված ջոկատները Կարծախի մոտ՝ Գյոք Դաղ լեռան շրջանում կարողացան կազմակերպել դիմադրություն: Շնորհիվ հայկական զինված խմբերի մղած պաշտպանական ծանր մարտերի, հնարավոր եղավ ապահովել գավառի բնակչության մի մասի արտագաղթը³:

Գավառ ներխուժած թուրք ասկյարներն ու տեղի մեսխեթցիները թալանեցին գյուղերն ու սրի քաշեցին տեղում մնացած բնակչության մի մասին: Գերի վերցված հայերից առանձնացվեցին աշխատունակ հարյուրավոր տղամարդիկ և աքսորվեցին Թուրքիա, իսկ ավելի քան հազար ծեր տղամարդկանց ու կանանց աքսորեցին Բակուրիան՝ գաղթականների ճամբար: Կոտորածի ենթարկվեցին նաև Խորենիա և Թախչա գյուղերի բնակիչները: Ծալկա անցնելու ճանապարհին, Աբուլ լեռան ստորոտին, մի քանի թուրք լրտեսների հաջողվեց անվտանգության երաշխիքների կեղծ խոստումներով համոզել խորենիացիների մեծ մասին՝ 800 մարդու, վերադառնալ գյուղ: Ապա նրանք և Թախչա գյուղի 300 բնակիչ, թուրք ասկյարների կողմից արգելափակվելով մարագներում, վայրագորեն ոչնչացվեցին⁴: 1918 թ. հունիսից մինչև նոյեմբեր Բակուրիանի անտառներում զոհվեց ավելի քան 18 հազ. մարդ: Գրեթե նույնքան զոհեր տվեցին Ծալկայի և Մանգլիսի

¹ Տե՛ս Սանույան Ա., *Ախալցխայի և Ախալքալաքի գավառների 1918 թ. ինքնապաշտպանությունը*, Ե., 1992:

² Տե՛ս Մելքոնյան Ա., նշվ. աշխ., էջ 280:

³ ՀՀ ԳԱԱ ՊԻԱ, Լեոյի անձ. ֆ. 1, ց. 1. գ. 242. թ. 4-5:

⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1. գ. 17, թ. 34-35:

շրջաններում ապաստանած հայ գաղթականները: Մինչև հաջորդ գարուն ախալքալաքցի գաղթականների կորուստները հասան 40 հազարի¹:

Թուրքական զորքն ու խուժանը շարժվեցին գավառի հարավային գյուղերի՝ Կարծախի, Սուլդայի, Դադեշի և Գումբուրդոյի վրա: Բազմաթիվ գումբուրդոցիներ, այդ թվում՝ կանայք, ընկան անհավասար մարտում: Թուրքերը Գումբուրդոյում գերի վերցրեցին հարյուրավոր տղամարդկանց, մի մասին սպանեցին Կուրի ձորում, մյուսներին, լցնելով ջրհորները, խեղդամահ արեցին: Կոտորածներ եղան նաև գավառի այլ գյուղերում: Այդուհանդերձ, թուրքերը հանդիպեցին համառ դիմադրության Ալաստան, Մոլիտ, Տաբաձղուրի և այլ գյուղերի մատույցներում:

Թուրքական արշավանքների, սովի ու համաճարակների հետևանքով ոչնչացվեց Ախալքալաքի գավառի հայ բնակչության 42-45 տոկոսը:

3.2. Բաքվի հայության 1918 թ. ջարդերը

1918 թ. մարտի 30-ին սկսվեցին ադրբեջանական ազգային «Մուսավաթ» կուսակցության և Ս. Շահումյանի գլխավորած Բաքվի խորհրդային իշխանության միջև քաղաքացիական կռիվները: Ապրիլի 1-ին եռօրյա մարտերն ավարտվեցին մուսավաթականների պարտությամբ:

1918 թ. մայիսին՝ Գանձակում Ադրբեջանի կառավարության և Մուսավաթ կուսակցության գործիչների գաղտնի խորհրդակցություն գումարվեց, որտեղ մշակվեց Նուխիի, Արեշի, Գյոլչայի, Շամախիի և Բաքվի գավառների հայության կոտորածների ծրագիր: Բաքվի ինք-

¹ Տե՛ս Մելքոնյան Ա., նշվ. աշխ., էջ 294:

նապաշտպանությունը վճռորոշ նշանակություն ունենալու միայն Բաքվի ու Ելիզավետպոլի նահանգների հայության, այլև Հայաստանի Հանրապետության հետագա ճակատագրի համար¹:

Հունիսի 15-ին թուրքական զորքերը սկսեցին ռազմական գործողություններ՝ զինաթափելով Գանձակի հայ բնակչությանը: Հունիսի 26-ին Հ. Սրվանձտյանի բրիգադին հաջողվեց Կարամարյանի մոտ տեղի ունեցած մարտերում փայլուն հաղթանակ տանել և զրավել Կարամարյան-Քյուրդամիր և Զուրավկա-Պետրոպավլովսկ գծերը: Հունիսի 27-ից 30-ը Գյոքչայի շուրջ տեղի ունեցան թեժ մարտեր, որտեղ թշնամին, մեծ կորուստներ տալով, նահանջեց: Ստանալով նոր համալրումներ՝ թշնամին հուլիսի 1-ի գիշերը Գյոկչայի ուղղությամբ անցավ լայնածավալ հարձակման: Այս անգամ Բաքվի ինքնապաշտպանական ուժերը պարտություն կրեցին, որով սպառնալիք ստեղծվեց Բաքվի և Ելիզավետպոլի հայ ազգաբնակչության համար: Տիրելով Գյոկչայի գավառին՝ թուրքական զորքը թաթարների հետ միասին կոտորեցին այնտեղ պատսպարված շատ հայերի: Միայն Գյոկչայ ավանում սպանվեց 700 հայերի մի մասը, իսկ կենդանի մնացածներին, այդ թվում՝ 50-ից ավելի կանանց և աղջիկների, բաժանեցին թաթարական գյուղերում²:

Օգոստոսի 1-ին Նուրի փաշան հրամայում է շարունակել Բաքվի վրա հարձակումը: Մարտերը վերսկսվեցին օգոստոսի 2-ին: Օգոստոսի 4-ին Բաքվի պաշտպաններին օգնության եկան անգլիական ջոկատները՝ գնդապետ Ստոքսի հրամանատարությամբ, իսկ ավելի ուշ՝ օգոստոսի 17-ին Բաքու ժամանեց նաև անգլիական ուժերի գլխավոր հրամանատար գեներալ Դենստերվիլը: Թուրքերը, համալրում ստանալով, օգոստոսի 29-ին անգլիացիների պաշտպանած ճակատում անցան վճռական հարձակման: Սեպտեմբերի 1-ին թուրքե-

¹ Տե՛ս Ստեփանյան Գ., *Բաքու քաղաքի հայության պատմությունը*, Ե., 2011:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 36, թ. 45:

րը գրավեցին Բալախանի, Ռամանի, Սաբունչի, Սուրախան և Խրդալան գյուղերը: Սեպտեմբերի 13-ի առավոտյան թուրքերը շարունակեցին հարձակումը, և հաջորդ օրը թեժ մարտերից հետո Բաքուն հանձնվեց թշնամուն, իսկ հայ բնակչությունը տարհանվեց քաղաքից: Սեպտեմբերի 15-ին թուրքական զորքերը ներխուժեցին քաղաք և երեք օրվա ընթացքում գազանաբար կոտորեցին 30 հազար հայերի¹:

Առաջին աշխարհամարտի հետ սկսված թուրքական իշխանությունների ցեղասպան քաղաքականությունն, այսպիսով, չսահմանափակվեց Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության այլ տարածքներով հայության բնաջնջմամբ, այլ տեղափոխվեց Արևելյան Հայաստանի ու Ռուսական կայսրության հայաբնակ այլ տարածքներ:

3.3. 1919-1922 թթ. Կիլիկիայի և Զմյուռնիայի հայության բնաջնջումը քեմալականների կողմից

1919 թ. փետրվարին Անտանտի տերությունների կողմից Կիլիկիան գրավելուց հետո թուրքական իշխանությունները սկսեցին մահմեդական բնակչությանը հրահրել քրիստոնյաների դեմ:

Ֆրանսիական իշխանությունները հավաստիացնում էին կիլիկիահայերին, որ նրանք Ֆրանսիայի հովանու ներքո կարող են իրենց ապահով զգալ Կիլիկիայում, սակայն հետագա զարգացումներն ապացուցեցին ճիշտ հակառակը:

Առաջին աշխարհամարտում պարտություն կրած Օսմանյան կայսրության բնակում մեծ հեղինակություն վայելող սպաներից Մուսթաֆա Քեմալը ռազմական գործողություններ սկսեց Կիլիկիա-

¹ Տե՛ս Լույն տեղում, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 96-99:

յում, ինչն ուներ իր դրդապատճառները: Նախ՝ 1919-1920 թթ. Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում միայն Կիլիկիայում էին համեմատաբար մեծ թվով հայեր մնացել և ձգտում էին այնտեղ ինքնավարություն ստեղծել: Երկրորդ՝ շատ ավելի հեշտ էր պայքարել Կիլիկիայում քիչ ուժեր ունեցող ֆրանսիացիների, քան Իզմիրում գտնվող լավ զինված հունական բանակի դեմ: Արդեն 1919 թ. հունվարին թուրք սպաները կազմակերպել էին Ադանայի ռազմաճակատը, որն ընդգրկում էր ամբողջ Կիլիկիան: Մ. Քեմալը ծրագրել էր Կոնիայից և Սեբաստիայից հարձակման անցնել երեք՝ Մերսին-Ադանա, Հաճըն-Սիս և Այնթապ-Մարաշ ուղղություններով: Զգալով մոտալուտ վտանգը և հավատալով ֆրանսիացիների օգնության խոստմանը՝ կիլիկիահայությունն անմիջապես դիմում է դիմադրության: Հունվարի 23-ին քաղաք ներխուժած Բլըջ Ալիի հրոսակները հրդեհում են հայկական թաղամասերը, Ս. Աստվածածին եկեղեցին, զոհվում են 2 հազար հայեր¹:

Փետրվարի 8-ից 9-ը Մարաշում տեղակայված ֆրանսիական զորամասը հրետանային կրակով ավերում է թուրքական դիրքերը: Սակայն փետրվարի 10-ին թուրքերը բանազնաց են ուղարկում ֆրանսիական հրամանատարության մոտ, ինչից հետո հալթող կողմի հրամանատարը նահանջի հրաման է տալիս: Նահանջի հրամանը պայմանավորված էր ֆրանսիացիների այն մտայնությամբ, որ Կիլիկիան Թուրքիային զիջելով՝ կկարողանան պահել Սիրիան: Ֆրանսիական ուժերի նահանջից հետո թուրքերն անցան բարբարոսության՝ չխնայելով կանանց ու երեխաներին: Մարաշի սանջակում և քաղաքում բնակություն հաստատած հայերից սրի քաշվեց 13.600-ը, 8 հազարն արտաքսվեց իշխանությունների կող-

¹ Գալուստեան Գ.Հ., *Մարաշ կամ Գերմանիկ և Իկրու Չկթուն*, Նիւ Եորք, 1934, էջ 837:

մից¹: Մարաշի անկումով քեմալականների արշավանքը Կիլիկիայում ավելի ծավալվեց:

Քեմալականների հաջորդ հարվածն ուղղվեց Հաճընի դեմ, որտեղ շուրջ 8 հազար հայեր էին հաստատվել: Հաճընում ստեղծվում է զինվորական մարմին՝ Սարգիս Ճեպեճյանի ղեկավարությամբ: Գործում էր նաև Հաճընի ինքնապաշտպանության բարձրագույն խորհուրդը՝ Հաճընի հոգևոր առաջնորդ Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյանի նախագահությամբ: Զինվորագրվում են 16–50 տարեկան բոլոր տղամարդիկ: Ինքնապաշտպանության խորհուրդը Հաճընի ինքնապաշտպանության մասին տեղյակ է պահում ֆրանսիական իշխանություններին, որոնք, սակայն որևէ օգնություն չեն տրամադրում: Մարտի 15-ին Հաճընն ամբողջությամբ պաշարվում է քեմալականների կողմից, հայերը մերժում են հանձնվելու մասին մարտի 28-ի թուրքերի վերջնագիրը, ինչից հետո սկսվում է Հաճընի յոթամսյա հերոսամարտը: 1920 թ. հոկտեմբերի 19-ի վաղ առավոտյան թուրքերը ոմբակոծում են քաղաքը, սրի քաշում Հաճընի ողջ հայությանը: Միայն 387 հոգու է հաջողվում ճեղքել պաշարման օղակը և մարտեր մղելով՝ հասնել Ադանա՝ ճանապարհին տալով 22 զոհ²:

1920 թ. հունիս-հուլիս ամիսներին քեմալականները սպառնում էին նաև Ադանայի հայությանը: Հուլիսի 11-ին Ադանայի մահմեդական բնակչությունը հարձակվում է քաղաքի հայ բնակչության վրա: Ֆրանսիական 3 հազարանոց ջոկատը, որի կազմում ընդգրկված էին նաև հայեր, անցնում է հակահարձակման: Ընդհարումները շարունակվում են մինչև սեպտեմբերի կեսերը, հետագայում դրությունը մասամբ կայունանում է:

¹ Արզումանյան Մ.Վ., *Արևալիքից վերածնունդ*, Ե., 1973, էջ 419:

² Սահակյան Ռ. Գ., *Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919–1921 թթ.*, Ե., 1970, էջ 186:

Ծանր էր իրավիճակը նաև Այնթապում, ուր հաստատվել էին մոտ 17 հազար հայեր: 1920 թ. ապրիլի 1-ին, երբ ֆրանսիական ուժերի դուրս եկան քաղաքից, թուրքերն անցան հարձակման, և սկսվեց Այնթապի մոտ մեկ տարի (1920 թ. ապրիլի 1 – 1921 թ. փետրվարի 8) տևած գոյամարտը: 1921 թ. փետրվարի 8-ին թուրքերը հաշտություն խնդրեցին, սակայն մարտի 9-ին Լոնդոնում կնքվեց թուրք-ֆրանսիական պայմանագիրը, ըստ որի՝ ֆրանսիացիները թուրքերին էին հանձնում Այնթապի սանջակը, Քիլիսը և այլ շրջաններ: Ստեղծված պայմաններում այնթապցիները բռնեցին գաղթի ճամփան՝ լքելով հայրենի օջախները:

1919 թ. մայիս-սեպտեմբեր ամիսներին Ջեյթունում և նրա շրջակայքում հաստատվել էին 1200 հայեր՝ ջանալով ստեղծել կյանքի քիչ թե շատ տանելի պայմաններ: 1920 թ. հունվարին թշնամին առաջին հարվածը հասցնում է Ջեյթունի գյուղերին, որոնք զուրկ էին պաշտպանության միջոցներից: Մարտի սկզբին Ջեյթունն արդեն շրջափակման մեջ էր, սակայն զեյթունցիները երկար ժամանակ համառորեն շարունակում էին դիմադրել գերակշռող թուրքական ուժերին:

1921 թ. հունիսի 18-ին թուրքական կողմը վերջնագիր է ներկայացնում հայերին՝ պահանջելով հանձնվել: Հունիսի 22-ին թուրքերը, թնդանոթներ մոտեցնելով Ջեյթունին, հայերից պահանջում են հանձնվել և տեղափոխվել Մարաշ՝ տալով ընդամենը 5 ժամ ժամանակ: Անհավասար մարտերից հետո սեպտեմբերի 2-3-ին 118 հոգու է հաջողվում հասնել Քիլիս՝ ֆրանսիական գոտի և փրկվել:

Քեմալականների ցեղասպան քաղաքականությունն իր դրսևորումն ունեցավ նաև Ջմյունիայի հայ և հույն բնակչության նկատմամբ: 1922 թ. սեպտեմբերի 9-ին թուրքական ուժերը մտնում են

Զմյուռնիա և ավերածություններ կատարում հայկական թաղամասում: Սեպտեմբերի 10-ին քաղաք է ժամանում Մ. Քեմալը և հաջորդ օրը հրաման է արձակում քաղաքի հայ բնակչության կոտորածի և նրանց ունեցվածքի բռնազավթման վերաբերյալ:

Զմյուռնիայի հայ բնակչության մի մասը դիմեց ինքնապաշտպանության: Քեմալականները սեպտեմբերի 13-ին հրկիզեցին Զմյուռնիայի հայկական թաղամասը: Հայերի մի մասը նետվեց քաղաքի նավահանգիստ, որպեսզի մի կերպ փրկվի, մական հայերով, ինչպես նաև հույներով լցված տասնյակ նավեր քեմալականների թնդանոթների համազարկերով ջրասույզ եղան: Նրանցից միայն մի չնչին մասին հաջողվեց անցնել Հունաստան: Բնաջնջվեց Զմյուռնիայի նահանգի շուրջ 100 հազար հայ և հույն բնակչություն:

3.4. Արևմտահայ գաղթականությունը և հայ որբերը Հայաստանի Հանրապետությունում 1918-1920 թթ.

Առաջին աշխարհամարտի տարիներին երիտթուրքերի իրագործած ցեղասպանությունից մազապուրծ արևմտահայության մի զգալի հատվածը, խույս տալով կոտորածներից, անցավ Արևելյան Հայաստան, Վրաստան ու Հյուսիսային Կովկաս: 1918 թ. մայիսի կեսերին Արևելյան Հայաստանում ապաստանել էին հարյուր հազարավոր գաղթականներ: Նորահռչակ Հայաստանի Հանրապետությունը կոչված էր սատարելու գաղթականությանը: Գաղթականության հարցերով զբաղվում էին խորհրդարանի գաղթականության հարցերի մշտական հանձնաժողովը և կառավարության խնամատարության ու ներքին գործերի նախարարությունները: 1918 թ. սեպտեմբերի 28-ին Հայաստանի խորհրդարանն ընդունեց «Կարիք ունեցող գաղթականների խնամատարության մասին» օրենքը, որի

համաձայն աշխատունակ գաղթականներին տրվելու էր աշխատանք, իսկ անաշխատունակներին՝ նպաստ: Իշխանությունները լքված ու անտեր հողերը սկսեցին տրամադրել գաղթական ընտանիքներին: Մեկ այլ օրենքով նախատեսվում էր պետական միջոցներով գաղթական կանանց համար բացել ջուլիականոցներ: Գործի դրվեցին 1500 դազգահ և 20 հազար ճախարակ¹: 1919 թ. հանրապետության սոցիալ-տնտեսական կյանքի որոշակի կայունությունը բարենպաստ ազդեցություն ունեցավ նաև գաղթականության համար: Միայն Կարսի մարզում 50 հազար փախստականների ներգաղթը կազմակերպելու և իրենց նախկին բնակավայրերում վերահաստատվելու նպատակով կառավարությունը հատկացրեց 36,2 միլիոն ռուբլու վարկ²:

1920 թ. գարնանը, երբ մեծ տերությունները դե ֆակտո ճանաչեցին Հայաստանի Հանրապետությունը և Թուրքիայի հետ մշակեցին ապագա հաշտության պայմանագրի նախագիծ, գործնական հողի վրա դրվեց արևմտահայ գաղթականությանը դեպի Արևմտյան Հայաստան ներգաղթեցնելու խնդիրը:

1920 թ. մարտին հիմնվեց նեֆգաղթի հանձնաժողովը, որը պետք է զբաղվեր այլ երկրների արտագաղթած արևմտահայության Հայաստան ներգաղթելու գործի կազմակերպմամբ: Ներգաղթի խնդրով զբաղվում էին նաև Փարիզում գտնվող հայկական պառավիրակությունները, արևմտահայ գործադիր մարմինները և հայ քաղաքական կուսակցությունները:

1918 թ. հոկտեմբերի 11-ի օրենքով իշխանությունները ստանձնեցին նաև արևմտահայ որբերի խնամքը: Ինամատարության նախարար Ա. Խատիսյանը կազմել էր գաղթականության, այդ թվում՝ որբերի խնդրին վերաբերող գործունեության ծրագիր: Հայաստա-

¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 86, թ. 6-8:

² Նույն տեղում, ֆ. 243, ց. 1, գ. 9, թ. 33:

նում կային շուրջ 40 հազար որբեր, որոնցից միայն 15.612-ն էին բարեգործական կազմակերպությունների խնամքի տակ առնված: Հանրապետությունում գործում էին շուրջ հինգ տասնյակ որբանոցներ, որոնցից ամենամեծը Ալեքսանդրապոլի որբանոցն էր՝ 1219 որբերով¹:

1919 թ. մայիսի 1-ից Հայաստանի խնամատարության նախարարության ենթակայության տակ գտնվող որբանոցները կնքած պալմանագրի համաձայն հանձնվեցին «Մերձավոր Արևելքում ամերիկյան օգնության կոմիտեին» (Ամերկոմ): 1919 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների հաշվով որբախնամ նպատակների համար հատկացվում է շուրջ 65 միլիոն ռուբլու վարկ²: 1919 թ. երկրորդ կեսից որբերի դաստիարակության և աշխատանքային հմտություններ սովորեցնելու նպատակով ծրագրվում է 2250 որբերի համար բացել հյուանության, կոշկակարության, կարուձևի, գուլպայագործի և ջուլիակության 35 արհեստանոց³:

1920 թ. օգոստոսի 1-ի դրությամբ սնունդ էր ստանում 50 հազար երեխա, հանրապետությունում օգնության կարգով բաժանվել էր 108 հազար տոննա մթերապաշար, իսկ ընդհանուր ծախսերի գումարը կազմում էր 21 միլիոն ԱՄՆ դոլար:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո էլ շարունակվեցին արևմտահայ գաղթականության և հայ որբերի՝ Հայաստանում ինտեգրվելու ուղղությամբ տարվող աշխատանքները:

¹ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 22, թ. 8, 84:

² Ավետիսյան Ա., *Մերձավոր Արևելքի ամերիկյան նպատասխանող կոմիտեի գործունեությունը Հայաստանում 1918–1930 թթ.*, Ե., 2009, էջ 79, 97:

³ ՀԱԱ, ֆ. 117, ց. 1, գ. 1880, թ. 3:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

4.1. Հայ-թուրքական սահմանագիծն ըստ Սևրի պայմանագրի և ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի

1920 թ. օգոստոսի 10-ին կնքված Սևրի հաշտության պայմանագիրը վերջինն էր Առաջին աշխարհամարտում հաղթանակած ու պարտված տերությունների միջև կնքված պայմանագրերի շարքում: Պայմանագրի 88-րդ հոդվածով փաստացի ճանաչվում էր Հայաստանի անկախությունը, իսկ 90-րդ հոդվածով էին ապագա հայ-թուրքական սահմանների հստակեցման հարցը վստահվում էր ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնին: Սևրի պայմանագրի 90-րդ հոդվածով Թուրքիան պարտավորվել էր ճանաչել ապագա հայ-թուրքական սահմանը և «իրավարար որոշման օրից հրաժարվելու էր հանձնված տարածքների նկատմամբ իր բոլոր իրավունքներից և իրավահիմունքներից»¹:

Ազգերի ինքնորոշման իրավունքի կիրառման առումով հենց Սևրի պայմանագրում առաջին անգամ միջազգային մակարդակով բարձրացվեց նաև քրդական հարցը, նախատեսվում էր ստեղծել առանձին պետություն՝ Քրդստան: Այս իմաստով Ադոնցը հիմնա-

¹ Հայաստանը միջազգային դիվանագիտության և տոկուսական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1917), խմբ.՝ Ջ. Կիրակոսյան, Ե., 1972, էջ 676:

վորված ձևով մտահոգվում էր այն փաստով, որ Դերսիմի և Խարբերդի սանջակները, որոնք իրականում և աշխարհագրական և էթնիկ առումներով կազմում էին Հայկական բարձրավանդակի անբաժան մասը, վերապահվում էին Քրդստանին: Այսպիսով, ապագա քրդական պետությունը ստեղծվում էր մասամբ նաև հայկական տարածքների հաշվին: Նման որոշման հիմք Ադոնցը տեսնում էր դեռևս պատերազմի ընթացքում 1916թ. կնքված ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագիրը, որին նախորդել էր Սայքս-Պիկոյի անգլո-ֆրանսիական գաղտնի համաձայնությունը, որոնցով Արևմտյան Հայաստանը մասնատվում էր ճիշտ և ճիշտ Խարբերդի գծի երկայնքով¹: Տվյալ պարագայում հակակշիռ պետության բացակայության պայմաններում հայկական պատվիրակություններին չէր մնում ոչինչ, քան համակերպվել ոչ միայն այդ հատվածի, այլև Կիլիկիայի կորստի հետ, մխիթարվելով նրանով, որ պատմական հայրենիքի մի զգալի հատված միացվելու էր Հայաստանին:

Վուդրո Վիլսոնին իրավարարությունը Դաշնակից տերությունների Գերագույն խորհուրդը վաղօրոք սահմանափակում էին կոնկրետ տարածքներով: Հայ-թուրքական սահմանագծումն իրականացնելիս իրավարարը պետք է սահմանափակվեր Վանի, Բիթլիսի, Էրզրումի ու Տրապիզոնի վիլայեթներով, վերջինով ապահովվելու էր Հայաստանի ելքը դեպի Սև ծով, առանց որի իրավարարությունը կլիներ թերի, և տերությունները իրենց վրա պարտավորություն էին վերցնում ձեռնարկել հնարավոր միջոցներ, որպեսզի ԱՄՆ նախագահը կարողանա դեպի ծով ելք նախատեսել Հայաստանի համար²:

¹ Ադոնց Ն., *Հայկական հարցի լուծման շուրջ*, Ե., 1989, էջ 19:

² Барсегов Ю.Г., *Арбитражное решение президента США по армяно-турецкой границе*, Е., 1995, с. 14.

ԱՄՆ-ի նախագահին իրավարար վճիռը ստորագրեց 1920 թ. նոյեմբերի 22-ին՝ Հայաստանի խորհրդայնացումից ընդամենը 10 օր առաջ: Արդեն խորհրդայնացումից հետո, դեկտեմբերի 6-ին ԱՄՆ-ի նախագահի կայացրած իրավարար վճիռը պաշտոնապես Փարիզում փոխանցվեց Դաշնակից ուժերի Գերագույն խորհրդին: Վճռի պաշտոնական և ամբողջական անվանումն է. «ԱՄՆ նախագահի որոշումը Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանի, Հայաստանի դեպի ծով ելքի և հայկական սահմանին հարակից թուրքական տարածքի ապառազմականացման վերաբերյալ»: ԱՄՆ-ի նախագահին իբրև իրավարար իր իրավասության շրջանակներում հայ-թուրքական սահմանագծումն իրականացնելիս նախկինում Օսմանյան կայսրության տարածք համարվող Վանի, Բիթլիսի, էրզրումի և Տրապիզոնի նահանգների վրա հաստատում էր հայ ժողովրդի տիտղոսն ու իրավունքները, ապահովելով նաև ելք դեպի Սև ծով: Իրավարար վճռով Հայաստանին փոխանցվելիք տարածքը կազմելու էր ≈ 103.599 քառ. կմ, այսինքն՝ Արևմտյան Հայաստանի շուրջ 40 տոկոսը¹:

Հենց իրավարար վճռի վերնագրում «հայկական սահմանին հարակից թուրքական տարածքի ապառազմականացման» դրույթի ամրագրումը չափազանց կարևոր էր: Իրավարար վճռի վերնագրի տրամաբանությունից բխում էր ոչ միայն քեմալականների ռազմական ուժերի դուրսբերումը Հայաստանին փոխանցվելիք չորս նահանգների տարածքներից, այլև այդ ուժերի ետքաշումը անգամ իրավարար վճռով նախատեսված հայ-թուրքական նոր սահմանից դեպի Թուրքիայի խորքերը:

¹ Տե՛ս Պապյան Ա., *Հարց պահանջատիրության իրավական հիմքերը* (հոդվածների ժողովածու). Ե., 2007, էջ 6:

4.2. Ալեքսանդրապոլի, Մոսկվայի ու Կարսի պայմանագրերով Սևրի պայմանագիրն ու Վիլսոնի իրավարար վճիռը չեղարկելու Թուրքիայի փորձերը

Ալեքսանդրապոլի պայմանագրով թուրքերը Հայաստանին պարտադրում էին հրաժարվել Սևրի փաստաթղթով իրեն վերապահված իրավունքներից, փորձում էին նոր տարածքներ կտրել Հայաստանի Հանրապետությունից (ընդհանուր առմամբ ևս 20.7 հազար քառ. կմ.): Սակայն այդ պայմանագիրը ստորագրվեց 1920 թ.-ի դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը, այն բանից հետո, երբ դեկտեմբերի 2-ին արդեն ստորագրվել էր Երևանի պայմանագիրը, որով իշխանությունը հանձնվել էր հայիեղկոմին: Տվյալ դեպքում Ալեքսանդրապոլի պայմանագիրը հայկական կողմից ստորագրեցին արդեն լիազորությունները վայր դրած կառավարության ներկայացուցիչները, որոնք այլևս իրավասու չէին դա անելու, ուստի գերազանցել են իրենցի իրավասությունները, հետևաբար նաև այս պատճառով այդ պայմանագիրը չի կարող իրավական ուժ ունենալ: Բացի այդ էլ, Ալեքսանդրապոլի պայմանագրի 15-րդ հոդվածի համաձայն՝ պայմանագիրը պետք է վավերացվեր մեկ ամսվա ընթացքում, սակայն այն ընդհանրապես չի վավերացվել: Այսինքն, ապօրինի լինելուց զատ, Ալեքսանդրապոլի պայմանագիրը անգամ ուժի մեջ էլ չի մտել:

Հայաստանի Խորհրդայնացումից հետո Սևրի պայմանագրի և Վիլսոնի իրավարար վճիռի չեզոքացումը թուրքերն արդեն կապում էին բոլշևիկյան Ռուսաստանի հետ: 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրով Հայաստանի տարածքներից Կարսը, Արդահանը, Սուրմալուն հանձնվում էին Թուրքիային, իսկ Նախիջևանը հանձն-

¹ Թորիլեան Շ., *Հսկական հարցը և միջազգային օրենքը*, Պոլսոյ 1976, էջ 107:

վում էր Ադրբեջանի խնամակալությանը, պայմանով, որ վերջինս այն չի զիջի երրորդ պետությանը¹ (այսինքն՝ Հայաստանին): Մոսկվայի պայմանագիրը ստորագրվեց առանց Հայաստանի մասնակցության և առանց նրա կամքը հաշվի առնելու, ուստի այն չէր կարող պարտադիր լինել վերջինիս համար: Սա թերևս գիտակցում էին նաև բոլշևիկներն ու քեմալականները, և դրանով պետք է բացատրել Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածը, որով Ռուսաստանը պարտավորվում էր միջոցներ ձեռնարկել, որ անդրկովկասյան հանրապետությունները Թուրքիայի հետ ապագայում կնքվելիք պայմանագրերում ճանաչեն Մոսկվայի պայմանագրի՝ անմիջականորեն իրենց վերաբերող հոդվածները²: Դա նշանակում էր, որ Ռուսաստանը պարտավորվում էր առաջին հերթին հարկադրել Հայաստանին ճանաչել Թուրքիայի հետ իր կնքած ապօրինի գործարքի պայմանները:

Խորհրդային Ռուսաստանը չհապաղեց կատարել Թուրքիային տված իր խոստումը, նրա նախաձեռնությամբ նույն թվականի հոկտեմբերի 13-ին Կարսում ստորագրվեց փաստաթուղթ մի կողմից Թուրքիայի, իսկ մյուս կողմից Անդրկովկասի երեք հանրապետությունների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի միջև: Կարսի պայմանագիրը փաստորեն հանդիսացավ Մոսկվայի պայմանագրի պատճենը, որով Ռուսաստանը և Թուրքիան փորձում էին իրավական տեսք տալ իրենց ապօրինի գործարքին³: Կարսի պայմանագիրը բառացի կրկնում է Մոսկվայի պայմանագրի հոդվածները և այդ ճանապարհով «օրինականացնում» Մոսկվայի բոլշևիկա-քեմալական անօրինական գործարքը:

¹ Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 500–501:

² Նույն տեղում, էջ 504:

³ Թորիկեան Շ., Հայկական հարցը և միջազգային օրենքը, էջ 107:

Մոսկվայի ու Կարսի երկկողմ անօրինական պայմանագրերով Սևրի փաստաթղթով ամրագրված Հայաստանի իրավունքները՝ չեզոքացնելու փորձերից հետո, թուրքերը ցանկանում էին այդ հարցում վերջակետ դնել միջազգային բազմակողմ պայմանագրի միջոցով, որը նախատեսվում էր կնքել Լոզանի կոնֆերանսում: Քեմալականների հաշվարկների համաձայն, Հայաստանի խորհրդայնացումից հետո Անտանտի նախկին տերություններն այլևս նախկինի նման չպետք է սատարեին Հայաստանին, որն արդեն գտնվում էր Խորհրդային Ռուսաստանի ազդեցության ներքո: Սակայն 1923 թ. հուլիսի 24-ին ստորագրված Լոզանի պայմանագրով հստակեցվում էին Թուրքիայի միայն արևմտյան՝ Բուլղարիայի և Հունաստանի հետ և հարավային՝ Սիրիայի և Իրաքի սահմանները և ոչ մի խոսք չկար արևելյան, մասնավորապես Հայաստանի հետ սահմանի մասին¹: Պնդումն առ այն, որ այդ հարցն արդեն լուծվել էր Մոսկվայի և Կարսի պայմանագրերով քննադատության չի դիմանում այն պարզ պատճառով, որ եվրոպական տերությունների գաղափարական ու քաղաքական հակառակորդ հանդիսացող Խորհրդային Ռուսաստանի հետ կատարված երկկողմ գործարքը չէր կարող պարտադիր լինել Լոզանի կոնֆերանսին մասնակցած տերությունների համար:

4.3. Հայոց ցեղասպանության հետևանքները: Մշակութային ցեղասպանություն

Հայ ժողովրդին իր բնօրրանից զրկելը՝ հայրենագրկումը, հանդիսանում է Հայոց ցեղասպանության գլխավոր կորուստը: Միաժամանակ՝ այն ցեղասպանության կազմակերպիչների համար

¹ Տե՛ս http://www.lib.byu.edu/index.php/Treaty_of_Lausanne

հանդիսացել է այդ հանցագործությունը կատարելու կարևորագույն շարժառիթը և նպատակը¹: Քանի որ խոսքը հայրենիքի մեծ մասի՝ 9/10-ի կորստի մասին է, ուստի պետք է հստակեցնել, թե դա ինչ հետևանքներ է ունեցել և ինչպես է անդրադարձել հայ ժողովրդի հետագա կենսագործունեության ու զարգացման վրա:

Մեծ եղեռնից հետո հայ ժողովրդին հասցված մարդկային կորուստները կազմեցին շուրջ 1,5 միլիոն մարդ: Սակայն, մարդկային կորուստների թիվը հստակեցնելիս, անպայմանորեն պետք է հաշվի առնվի նաև ցեղասպանության քաղաքականության ընթացքում իսլամացած հայերի թիվը, որոնք ցեղասպանության զոհ-ժողովրդի համար նույնպես մարդկային կորուստ են, քանզի ուժացման այդ գործընթացի հետևանքով նրանք դադարել են իրենց հայ համարել:

Հոգեբանական բարդություններ. Ցեղասպանությունից հետո հայ ժողովուրդը ձեռք է բերել բազմաթիվ հոգեբանական բարդություններ ու վախեր, որոնք բացասաբար են անդրադարձել նրա հետագա կենսագործունեության վրա²: Հայոց ցեղասպանության հոգեբանական հետևանքներն ուղղակի և անուղղակի կերպով ազդել ու շարունակում են ազդել ոչ միայն Եղեռնը անմիջականորեն վերապրածների, այլ նաև հաջորդ սերունդների վրա:

Հայոց ցեղասպանության նյութական կորուստների հետ կապված հիմնականում հիշատակվում է 1919 թ. Փարիզի Խաղաղության վեհաժողովին հայկական պատվիրակությունների ղեկավարների՝ Ավետիս Ահարոնյանի և Պողոս Նուբար փաշայի կողմից ներկայացված հուշագիրը, որի համաձայն 1915–1919 թթ. հայերի ունեցած նյութական կորուստները հաշվվում են 19.130.982.000

¹ Տե՛ս Մելքոնյան Ա., *Հայոց պատմության դասերն ու պատգամները*, Ե., 2013, էջ 427:

² Տե՛ս *Стратегические последствия геноцида армян*, «Византийское наследие», (информационно-аналитический журнал), Е., 2002, № 3, с. 16.

Ֆրանսիական ֆրանկ¹: Սակայն կարճ ժամանակում կատարված այս հաշվարկը չի կարող համարվել վերջնական և ենթակա է վերանայման:

Մշակութային ժառանգության կորուստ. Հայոց ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովրդին հասցվել են վիթխարի մշակութային կորուստներ: 1914 թ. թուրքական պաշտոնական տեղեկությունների համաձայն՝ արևմտահայերն ունեին 83 առաջնորդարան, 1860 հայկական եկեղեցիներ ու մատուռներ, 451 վանքեր և շուրջ 2000 վարժարաններ²: ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1974 թ. տվյալների համաձայն՝ Արևմտյան Հայաստանի վանքերից ու եկեղեցիներից 1915 թ. հետո կանգուն է մնացել 913 շինություն, որոնցից հետագա տարիների ընթացքում 464-ը լիովին ոչնչացվել են, 252-ը՝ վերածվել փլատակների, իսկ 197-ը՝ վերականգնման լուրջ կարիք ունի³: Ակնհայտ է, որ նույն ճակատագրին են արժանացել նաև հայկական առաջնորդարաններն ու վարժարանները: Պետք է նշել, որ երբ խոսում ենք «շարունակվող ցեղասպանության» մասին, նկատի ունենք նաև Թուրքիայի կողմից հայկական պատմաճարտարապետական հուշարձանների, եկեղեցիների ու վանքերի նկատմամբ պետականորեն շարունակվող ոչնչացման քաղաքականությունը, որը նպատակ է հետապնդում Արևմտյան Հայաստանում վերացնել հայերի՝ իբրև այդ տարածքի իրական տերերի, մասին հիշեցնող ամեն ինչ: Հայերի նկատմամբ մշակութային եղեռնի դրսևորում պետք է համարել նաև հազարավոր հայկական ձեռագրերի ոչնչացումը, որոն-

¹ *Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստները*, կազմող Լ. Բարսեղյան, Ե., 1999, էջ 13:

² Տե՛ս Աստույան Ա., *Հայերի ունեզրկման գործընթացը Օսմանյան կայսրությունում 1915–1923 թթ. վկայություններ*, փաստեր և փաստաթղթեր, «Վ.մ», Ե., 2010, թիվ 3 (31), հավելված, էջ XVI–XVII:

³ Տե՛ս *Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հետաձևարարներ*, խորհրդարանական խումբներ, 19–20 դեկտեմբերի 2007 թ., Ե., 2011, էջ 144:

ցում ամփոփված է հայ ժողովրդի հազարամյա գիտական միտքն ու հանճարը:

Պետք է նշել, որ հայ պատմամշակութային ժառանգության ոչնչացման քաղաքականությունը շարունակվեց նաև հաջորդ թուրքական վարչակարգերի կողմից: Թուրքական իշխանությունների վարած մշակութային եղենի քաղաքականության հետևանքով հազարամյակների ընթացքում ստեղծված և համամարդկային քաղաքակրթության անքակտելի արժեք համարվող հայկական բազմահազար հուշարձաններ ջնջվեցին հողի երեսից:

Բարբարոսության առաջնային թիրախ էին դիտվում այն հուշարձանները, որոնք իրենց գոյությամբ առավել ցայտուն էին մատնանշում հայերի ներկայությունն իրենց պատմական հայրենիքում: Դրանցից էին վանքերն ու եկեղեցիները, բազմահազար արձանագիր տապանաքարերով և խաչքարերով հարուստ հայկական գերեզմանոցները: Հայկական կամուրջներից, աղբյուրներից և բնակելի կառույցներից անհետացվում են գլխավորապես հայերեն արձանագրությունները:

1928 թ. Արևմտյան Հայաստանում անվանափոխվեցին բնակավայրերի և աշխարհագրական բնիկ հայկական տեղանունները:

1940-60-ական թթ. հայկական հուշարձաններն Արևմտյան Հայաստանում ոչնչացվում էին նաև երկրի զինուժի կողմից: Կանգուն մնացած հուշարձանները ծառայում են որպես գոմ, պահեստ, նույնիսկ բանտ, որոշ դեպքերում էլ վերածվում են մզկիթի: Արևմտյան Հայաստանում բնակվող մահմեդականների շրջանում ակտիվորեն լուրեր էին տարածվում, թե հայկական եկեղեցիներում և գերեզմանատներում հայերը գանձեր են թաքցրել, ինչը հանգեց-

նում է այդ հուշարձանների ոչնչացմանը նաև տեղի մահմեդականների ձեռքերով¹:

Հայկական քաղաքակրթական ժառանգության նենգափոխման և յուրացման ծրագիր իրականացնելով, վերջին տարիներին թուրքական իշխանությունները սկսել են իրականացնել հայկական եկեղեցիների վերականգնման աշխատանքներ: Այս քայլերն իրականում ուղղված են ոչ թե այդ պատմամշակութային արժեքների վերականգնմանը, այլ աշխարհում Թուրքիայի՝ իբրև հանդուրժող և քաղաքակիրթ պետության պատրանքի ստեղծմանը:

Այսպիսով, հայ մշակույթի նկատմամբ իրագործված եղեռնը հետապնդում է երկու գլխավոր նպատակ՝ նախ ապացուցել, որ Արևմտյան Հայաստանը երբեք հայերի բնօրրանը չի եղել, և երկրորդ՝ Թուրքիայում հայերի ցեղասպանություն տեղի չի ունեցել:

Թուրքիայի Հանրապետության կողմից ներկայումս պետականորեն իրականացվող հայ պատմամշակութային հուշարձանների ոչնչացումը, դրանց յուրացումն ու Հայոց ցեղասպանության ժխտողականությունը պետք է դիտել իբրև ցեղասպան քաղաքականության հերթական փուլ:

4.4. Հայկական սփյուռքի ձևավորումը

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Օսմանյան կայսրությունում իրականացված ցեղասպանության հետևանքով ֆիզիկապես ոչնչացվեց և իր հայրենիքից՝ Արևմտյան Հայաստանից, բռնի կերպով վտարվեց ամբողջ հայությունը: Ցեղասպանությունը վերապրած հայությունն ապաստանեց գրեթե բոլոր աշ-

¹ Տե՛ս Հովհաննիսյան Ա., *Թուրքիա. մշակութային ցեղասպանություն*, Ե., 2005:

խարհամասերի տարբեր երկրներում, որի արդյունքում էլ ձևավորվեց հայ ժողովրդի կեցության մի նոր վիճակ՝ Սփյուռք:

Սկզբնական շրջանում հայ գաղթականները սկսեցին կուտակվել Մերձավոր Արևելքում, հիմնականում Սիրիայում, Լիբանանում, Իրաքում, ինչպես նաև Եգիպտոսում և Հունաստանում¹: Հայկական Սփյուռքը, սակայն, միանգամից չձևավորվեց: Նրա գոյավորման փուլը տևեց շուրջ մեկուկես տասնամյակ: Գաղթական հայությունը, որը գոյությունը քարշ էր տալիս անասելի ծանր պայմաններում, ակնկալում էր, որ մեծ տերությունները Թուրքիայի նկատմամբ հաղթանակ տանելուց հետո կկատարեն հայությանը տված իրենց խոստումները և հնարավորություն կընձեռեն հայրենիք վերադառնալու համար ու այնտեղ անվտանգ ու արժանապատիվ ապրելու երաշխիքներ կստեղծեն:

Հայկական հարցը լուծելու մեծ տերությունների խոստումների ի չիք դառնալուց և խոր հիասթափություն ապրելուց հետո արևմտահայությանը չէր մնում ոչինչ, քան փորձել հաստատվել նոր երկրներում, համակերպվել այդ երկրների սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական կյանքի հետ, բայց, միևնույն ժամանակ՝ չճուլվել այդ օտար միջավայրում և շարունակել հայ մնալ:

Սփյուռքի ազգային-էթնիկական գոյապահպանության հիմնական միջոցը կրթամշակութային գործունեությունն է, որն իրականացնում են քաղաքական կուսակցությունների հիմնած համասփյուռքյան մշակութային միությունները: Սփյուռքի հոգևոր-ազգային գործունեությունը կազմակերպվում էր նաև համայնքային կառույցների՝ եկեղեցու, վարժարանների, ակումբների և մշակութային օջախների միջոցով: Իբրև կանոն՝ համայնքները կազմակերպվում էին եկեղեցու շուրջ, որը իշխանությունների կողմից ճանաչվում էր

¹ Տե՛ս Դավթարյան Կ., *Հայ Սփյուռքի սրտամուկություն* (համառոտ ակնարկ). Ե., 2004:

որպես համայնքի ղեկավար մարմին: Հիմնական դերը վիճակվել էր Հայ առաքելական եկեղեցուն: Կարևոր գործունեություն էին ծավալում նաև Հայ կաթոլիկ և Հայ բողոքական (ավետարանական) եկեղեցիները: Սփյուռքի կենսագործունեությանն իրենց մասնակցությունն էին բերում նաև բարեգործական կազմակերպությունները, հայրենակցական միությունները¹:

Տարբեր երկրներում հայ գաղթականներին տեղավորելու հետ մեկտեղ առաջնահերթ խնդիր դարձավ նրանց աշխատանքով ապահովելը: Գործազրկությունը համազգային աղետի նշանակություն ունեցավ: Աշխատանք հայթայթելու համար անհրաժեշտ էր ընդունել տվյալ երկրի քաղաքացիություն: Ի տարբերություն շատ երկրների, այդ խնդիրը համեմատաբար հեշտ լուծվեց Բուլղարիայում և Լիբանանում:

Հայաստան-Սփյուռք կապերը սկզբնավորվում են Սփյուռքի ձևավորման առաջին իսկ տարիներին: Սակայն 1920-ական թթ. վերջերին խզվեցին Խորհրդային Հայաստանի կապերը սփյուռքայության հետ, ինչը պայմանավորված էր ԽՍՀՄ-ի վարած քաղաքականությամբ:

1940-50-ական թթ. պայմանականորեն համարվում է Սփյուռքի ինքնահաստատման փուլը: Մեծ տերությունների կողմից Հայկական հարցի լուծումն օրակարգից հանելուց հետո Փարիզը որպես սփյուռքահայության հասարակական-քաղաքական կառույցների գործունեության կենտրոն կորցրեց իր նշանակությունը՝ աստիճանաբար իր տեղն ու դերը զիջելով Լիբանանի մայրաքաղաք Բեյրութին, որտեղ կենտրոնացան ազգային կուսակցությունների և այլ համասփյուռքյան կառույցների կենտրոնական մարմինները: Այս-

¹ Տե՛ս Մելքոնյան Է., Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, Ե., 2005:

տեղ հայերի համար համեմատաբար դյուրին էր քաղաքացիություն ստանալ և աշխատանք գտնել¹:

1960-70-ական թթ. պայմանականորեն համարվում են Սփյուռքի զարթոնքի փուլ, որի ընթացքում հայերին հաջողվեց լուրջ ձեռքբերումներ ունենալ բնակության երկրների տնտեսության տարբեր բնագավառներում՝ որոշ ոլորտներում նույնիսկ հաստատելով իրենց առաջատար դիրքերը: Այս փուլում ակտիվացան նաև հարաբերությունները Խորհրդային Հայաստանի հետ, ինչը պայմանավորված էր, ինչպես նախորդ շրջանում տեղի ունեցած մեծ թվով սփյուռքահայերի ներգաղթով, այնպես էլ ԽՍՀՄ-ի վարած նոր քաղաքականությամբ²:

1980-ական թթ. պայմանականորեն սկսվում և մինչ օրս շարունակվում է Սփյուռքի ինտեգրման փուլը, որի ընթացքում զգալիորեն ակտիվացավ պայքարը ինչպես Հայոց ցեղասպանության, այնպես էլ Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման համար: Հայաստանի անկախության հռչակումից հետո հայրենիքի և Սփյուռքի միջև հաստատվեցին նոր որակի հարաբերություններ, որոնք միտված են ինչպես հայրենիքի հզորացմանը, այնպես էլ սփյուռքի համայնքներում հայապահպանության խնդիրների լուծմանը:

¹ Տե՛ս Թովուդյան Հ., Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթաօջախների պատմություն (1841–1946), Ե., 1986:

² Տե՛ս Դավաթյան Կ., Հայ Սփյուռքի պատմություն, էջ 145:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԱՅԱՀԱԼԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ: ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՈՒՄԸ ԵՎ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ

5.1. 1988-1990 թթ. ադրբեջանահայության նկատմամբ իրագործված ցեղասպանության և էթնիկ զտումների քաղաքականությունը

Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի հայության ինքնորոշվելու՝ Խորհրդային Հայաստանին միանալու, արդարացի քայլին ի պատասխան Խորհրդային Ադրբեջանի իշխանությունները, առաջնորդվելով թուրքական իշխանությունների, ինչպես նաև մուսավաթական նախնիների՝ դարասկզբին կուտակած հանցավոր փորձով, ադրբեջանահայության նկատմամբ սկսեցին իրականացնել ցեղասպանության և էթնիկ զտումների քաղաքականություն:

1988 թ. փետրվարի 27-ից 29-ը և 1990 թ. հունվարի 13-ից մինչև 20-ը Սումգայիթում և Բաքվում տեղի ունեցան հայերի զանգվածային ջարդերն ու տեղահանումները՝ ի պատասխան Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման պահանջի: Դա Ադրբեջանի իշխանությունների կողմից ի սկզբանե որդեգրված հանցավոր քաղաքականություն էր, որն իր հիմքում ուներ հայ ժողովրդի նկատմամբ Օսմանյան կայսրության և Քեմալական Թուրքիայի կողմից իրագործված ցեղասպանության քաղաքականությունը: Սումգայիթյան կոտորածների նման Բաքվի ջարդերը ևս կազմակերպված էին

և նպատակ էին հետապնդում ահաբեկել հայերին ու հարկադրել՝ հրաժարվելու իրենց օրինական պահանջներից, նրանց դուրս վռնել ոչ միայն Սումգայիթից ու Բաքվից, այլ նաև Ղարաբաղից: Այդ օրերի Ադրբեջանի շատ ղեկավարների կարգախոսն էր՝ «մահ հայերին»:

..

Սումգայիթում և Բաքվում հայերի զանգվածային սպանությունների կազմակերպված լինելը երևում է այն փաստից, որ բոլոր բնակկառավարչություններին վաղօրոք կարգադրված էր կազմել հայ բնակիչների ցուցակը, արգելել հայերին աշխատանքի գնալ¹: Եթե Սումգայիթում դա արվեց փետրվարի 28-ից սկսած, ապա Բաքվում դեռևս 1989 թ. դեկտեմբերի 25-ից սկսած: Երկու դեպքում էլ հայերին արտաքսելու և բնաջնջելու կոչերն ահագնացան այն բանից հետո, երբ առանձնացվեցին հայերի հասցեները և ճշտվեց այն ժամանակահատվածը, երբ սկսելու էին զանգվածային կոտորածները²:

Ադրբեջանի «Ժողովրդական ազգային ճակատի» պարագլուխ Ա. Փանախովը և Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Ա. Վեզիրովը հունվարի 13-ին հանդես գալով հեռուստատեսությամբ՝ ադրբեջանական ժողովրդին կոչ են անում հարձակում գործել Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի հայաբնակ բնակավայրերի վրա: Նրանց ելույթներից հետո Բաքվում սկսվեցին հայ ընտանիքների դեմ հարձակումներն ու բարբարոսությունները: Հունվարի 13-ին Բաքվի փողոցներում թափված էին կտտանքների ենթարկված տասնյակ հայերի դիակներ: Այդ օրվանից հալածանքները Բաքվում կազմակերպված ձև ընդունեցին: Քաղաքը տուն առ տուն «մաքրվում էր հայերից»: Հրաշքով փրկված հայերին ուղարկում էին նավահանգիստ, որտեղ նրանք վերջնականապես կո-

¹ Տե՛ս *Сумгаит...Геноцид...жестокость?* Է., 1989.

² Տե՛ս Մոսիսովա Ի., Հովհանյան Ա., *Բաքվի ջարդերը*, Ե., 1992:

ղդատվում էին և նավերով արտաքսվում հիմնականում Թուրքմենիա՝ Կրասնովոդսկի՝

Ադրբեջանահայության ցեղասպանության և էթնիկ զտումների մեջ իր մեղքի բաժինն ուներ նաև ԽՍՀՄ քաղաքական ղեկավարությունը, որը միջոցներ չձեռնարկեց հայությանը կոտորածները կանխելու ուղղությամբ²։ Խորհրդային զորքերը հայտնվում էին այն ժամանակ, երբ մոլեռանդ ամբոխն արդեն գրեթե ավարտել էր իր սև գործը, սակայն գալուց հետո էլ նրանք որևէ գործուն միջոցներ չէին ձեռնարկում մարդասպաններին սանձելու ուղղությամբ։

Պաշտոնական տվյալների համաձայն, Սումգայիթում զոհվել էր 32 հայ, այնինչ իրականում զոհված հայերի թիվը գերազանցում էր 100-ը³։ Պաշտոնական տվյալներով Բաքվում սպանված հայերի թիվը գերազանցում էր 200-ը, զոհերի իրական թիվն այդպես էլ չհաջողվեց պարզել, քանի որ այդ կապակցությամբ դատական քննություն չիրականացվեց։ Ադրբեջանական իշխանությունների ցեղասպան քաղաքականության հետևանքով ոչ միայն վերացվեց Բաքվի 252 հազարանոց հայկական համայնքը, տեղահանվեց Ադրբեջանի շուրջ 400 հազար հայությունը, այլև լայնածավալ ռազմական ագրեսիա սկսվեց ինքնորոշված Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության դեմ, ինչը հանգեցրեց մարդկային և նյութական ծանր կորուստների։

¹ Տե՛ս «Սովետական Ղարաբաղ», 16.01.1990 թ.։

² Տե՛ս Հակոբյան Թ., *Կամուջ ու սև, Արցախյան օրագիր*, Ե., 2008, էջ 99։

³ Տե՛ս *Сынзаст...Геноцид...жестокость?*, с. 55.

5.2. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման գործընթացը

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման առաջին լուրջ քայլը պետք է համարել հայերի զանգվածային բնաջնջման քաղաքականության հենց իրագործման պահին Անտանտի տերությունների՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի ու Մեծ Բրիտանիայի կողմից ընդունված 1915 թ. մայիսի 24-ի համատեղ հռչակագիրը, որով հայերի զանգվածային սպանությունների պատասխանատվությունը դրվում էր թուրքական իշխանությունների վրա՝ դրանց տալով հանցագործություն որակումը, որն ուղղված էր «մարդկության և քաղաքակրթության դեմ»¹: Հետագայում այս ձևաձևակերպումը ՄԱԿ-ի կողմից նույնականացվեց ցեղասպանություն՝ «գենոցիդ» եզրույթի հետ:

1918 թ. նոյեմբերի 4-ին օսմանյան խորհրդարանը չեղյալ համարեց երիտթուրքական կառավարության կողմից ընդունված և ապօրինաբար գործադրված 1915 թ. մայիսի 30-ի «Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքը, որը երիտթուրքական վարչակարգի համար «իրավական հիմք» ծառայեց հայերի զանգվածային բռնագաղթն ու բնաջնջումն իրականացնելու համար: Օսմանյան խորհրդարանի տվյալ որոշմամբ փաստորեն ճանաչեց երիտթուրքական կառավարության կողմից իրականացված Հայոց ցեղասպանության փաստը: Պատերազմի ընթացքում նախկին երիտթուրքական կառավարության կատարած հանցագործությունները, այդ թվում՝ հայերի զանգվածային կոտորածները հետաքննելու նպատակով ստեղծվեց խորհրդարանական հատուկ Հինգերորդ

¹ *Международные отношения в эпоху империализма, Документы из архивов Царского и Временного правительства. 1878–1917, М.-Л. 1931–1940, серия III, т. 7, ч. 2, с. 252.*

հանձնաժողովը, որի կազմակերպած քննությունների արդյունքում կազմված նյութերը հետագայում փոխանցվեցին երիտթուրք պարագլուխների գործերը քննող թուրքական ռազմական տրիբունալներին: Թուրքական ռազմական տրիբունալներում հայերի տեղահանությունների և կոտորածների մեղադրանքով ընթացած դատավարությունների արդյունքում երիտթուրքական կառավարության անդամները հեռակա կարգով դատապարտվեցին մահվան¹:

Օսմանյան կայսրության խորհրդարանում 1918 թ, նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների նիստերի ընթացքում հայերի զանգվածային կոտորածների փաստերի դատապարտումը, «Տեղահանության մասին» օրենքի չեղարկումը և թուրքական ռազմական տրիբունալների կողմից հայության բնաջնջման գլխավոր պատասխանատուներին մահվան դատապատելը, ըստ էության, նշանակում էր այդ երկրի օրենսդիր ու դատական մարմինները կողմից Հայոց ցեղասպանության փաստի յուրօրինակ ճանաչում:

1965 թ. Մեծ Եղեռնի 50-ամյակի հետ կապված ազգային զարթոնքը, հետևողական պայքարն ու քարոզչությունը տվեցին դրական արդյունքներ: Հայոց ցեղասպանության հարցը դուրս եկավ տասնամյակների լուծությունից և կրկին հայտնվեց միջազգային հանրության ուշադրության կենտրոնում: XX դարի առաջին ցեղասպանությունը սկսեց քննարկվել և դատապարտվել մամուլում, տարբեր պետությունների խորհրդարանների ու միջազգային կազմակերպությունների կողմից, ինչի արդյունքում բազմաթիվ պետություններ ու կազմակերպություններ ընդունեցին Հայոց ցեղասպանությունը ճանաչող ու դատապարտող բանաձևեր:

¹ Տե՛ս Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի: Առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա.Հ. Փափազյանի, Ե., 1988

1965 թ. ապրիլի 20-ին Ուրուգվայի Սենատն ու Ներկայացուցիչների պալատը համատեղ նիստում որոշեցին ապրիլի 24-ը սահմանել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր, իսկ 1972 թ. օգոստոսի 9-ին որոշում ընդունվեց Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման մասին: Ուրուգվայի խորհրդարանը 2004 թ. մարտի 26-ին ընդունեց Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման վերաբերյալ օրենք:

1965 թ. հուլիսի 15-ին Հելսինկիում տեղի ունեցած Խաղաղության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսը դատապարտեց Հայոց ցեղասպանությունը¹:

1974 թ. ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի 30-րդ նստաշրջանը Օսմանյան կայսրությունում հայերի ջարդը որակեց որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանություն: Իսկ 1985 թ. հուլիսի 2-ին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի 38-րդ նստաշրջանը 1915-1916 թթ. հայերի կոտորածները բնութագրեց որպես ցեղասպանության օրինակ²:

1975 թ. օգոստոսի 24-ին Կիպրոսի Ներկայացուցիչների պալատը բանաձև ընդունեց ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր հռչակելու մասին, իսկ 1982 թ. ապրիլի 29-ին նույն մարմինը հայ ժողովրդի նկատմամբ իրականացված ոճիրը բնորոշեց որպես ցեղասպանություն: 2015 թ. ապրիլի 2-ին Կիպրոսի խորհրդարանն ընդունեց Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենք:

1983 թ. օգոստոսի 10-ին Կանադայի Վանկուվեր քաղաքում գումարված Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը դատապարտեց Հայոց ցեղասպանությունը և ՄԱԿ-ին կոչ արեց ընդունել

¹ Տե՛ս Հովհաննիսյան Ն., *Արմենոլոգիա ճանաչված ցեղասպանություն և*, Ե., 2010, էջ 194:

² Տե՛ս Генцикл армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, Е., 2003, т. 2, ч. 1, с. 665-666.

այդ փաստը: Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը միաձայն դատապարտեց Հայոց ցեղասպանությունը 1989 թ. մայիսին ԱՄՆ-ի Սան Անտոնիոյում և 2015 թ. ապրիլին Երևանում կայացած հերթական համագումարում¹:

1984 թ. ապրիլի 13-16-ը Փարիզում հրավիրված Ժողովուրդների մշտական դատարանի հատուկ նստաշրջանը հայերի ցեղասպանությունը դատապարտող և հայ ժողովրդին պատճառած վնասները հատուցել պահանջող որոշում ընդունեց²:

1987 թ. հունիսի 18-ին Եվրոխորհրդարանն ընդունեց «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևը, որով ընդգծվեց, որ Օսմանյան կայսրության մեջ 1915-1917 թթ. հայերի կոտորածները ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի համաձայն հանդիսանում են ցեղասպանություն և, դրանից ելնելով Եվրոխորհրդից պահանջվում էր ճնշում գործադրել Թուրքիայի վրա, որ վերջինս նույնպես ընդունի Հայոց ցեղասպանությունը³: Հայոց ցեղասպանությունը Եվրոխորհրդարանի կողմից դատապարտվեց նաև 2005 թ. սեպտեմբերի 28-ի որոշմամբ և 2015 թ. ապրիլի 15-ին Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ ընդունված բանաձևով:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման գործընթացն ավելի մեծ ծավալներ ընդունեց, երբ Հայ դատի պաշտպանությամբ սկսեց հանդես գալ հայկական պետությունը: 1988 թ. նոյեմբերի 22-ին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը 1915 թ. հայերի ցեղասպանությունը դատապարտող օրենք

¹ Տե՛ս Հովհաննիսյան Ն., *Այնմեղիոր ճանաչված ցեղասպանություն է*, էջ 195:

² Տե՛ս *Միջազգային հանրությունը դատապարտում է Հայոց ցեղասպանությունը*, կազմող և ներածականի հեղինակ Լ.Ա. Բաբսեղյան, Ե., 1999, էջ 5:

³ Տե՛ս European Parliament Resolution on a political solution to the Armenian question, Doc. A2-33/87, http://www.europarl.europa.eu/intcoop/euro/pcc/aag/pcc_meeting/resolutions/1987_07_20.pdf

ընդունեց, իսկ 1990 թ. օգոստոսի 23-ին Գերագույն խորհրդի ընդունած՝ Հայաստանի անկախության հռչակագրում ամրագրվեց, որ «Հայաստանի Հանրապետությունը պաշտպանում է 1915 թ. Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում հայերի ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը»¹: Հայոց ցեղասպանության հարցում Հայաստանի որդեգրած այս դիրքորոշումը լրացուցիչ խթան հանդիսացավ այդ հանցագործության միջազգային ճանաչման ու դատապարտման գործընթացում:

1993 թ. մայիսի 5-ին Արգենտինայի Սենատի բանաձևով ճանաչվեց ու դատապարտվեց Հայոց ցեղասպանությունը: Արգենտինայի Սենատը Հայոց ցեղասպանության հարցում հետագայում ևս ընդունեց բանաձևեր 2003 թ. օգոստոսի 20-ին, այնուհետև՝ 2004 թ. մարտի 31-ի հռչակագիրը, 2005 թ. ապրիլի 20-ի որոշումը, 2006 թ. ապրիլի 19-ին ընդունեց հատուկ հայտարարություն: 2004 թ. մարտի 18-ին Արգենտինայի օրենսդիր մարմնում շրջանառության մեջ դրվեց Հայոց ցեղասպանության մասին օրինագիծը, 2007 թ. հունվարի 15-ին էլ ընդունվեց համապատասխան օրենքը:

1995 թ. ապրիլի 14-ին Ռուսաստանի Պետական Դոման հայտարարություն ընդունեց հայ ժողովրդի ցեղասպանության դատապարտման մասին: Պետական Դոման Հայոց ցեղասպանությունը ճանաչող ու դատապարտող հայտարարություններ ընդունեց նաև 2005 թ. և 2015 թ. ապրիլի 24-ին:

1996 թ. ապրիլի 23-ին Կանադայի Համայնքների պալատը յուրաքանչյուր տարվա ապրիլի 20-27-ը հայտարարեց մերձավորների նկատմամբ մարդկանց դաժան վերաբերմունքի հիշողության շաբաթ: 2002 թ. հունիսի 13-ին Կանադայի Սենատի որոշմամբ Հայոց ցեղասպանությունը՝ ճանաչվեց և դատապարտվեց որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանություն: 2004 թ. ապրիլի 21-ին Հայոց

¹ Տե՛ս ՀՀ Անկախության հռչակագիր, ընդունված 23 օգոստոսի 1990 թ.:

ցեղասպանությունը դատապարտող բանաձև ընդունեց նաև Կանադայի Համայնքների պալատը:

1996 թ. ապրիլի 25-ին Հունաստանի խորհրդարանն օրենք ընդունեց ապրիլի 24-ը հայերի ցեղասպանության հիշատակի օր հաստատելու մասին: 2014 թ. սեպտեմբերի 9-ին Հունաստանի խորհրդարանը ձայների մեծամասնությամբ ընդունեց օրենք, որով քրեական պատասխանատվություն սահմանվեց հրեաների, հայերի և Պոնտոսի հույների ցեղասպանության ժխտման համար:

1997 թ. մայիսի 3-ին Լիբանանի Պատգամավորների պալատի որոշմամբ ապրիլի 24-ը հռչակվեց որպես հայ ժողովրդի հետ միասնականության օր: 2000 թ. մայիսի 11-ին Լիբանանի խորհրդարանը երկրորդ անգամ բանաձև ընդունեց Հայոց ցեղասպանության վերաբերյալ:

1998 թ. մարտի 26-ին Բելգիայի Սենատը դատապարտեց 1915 թ. հայերի ցեղասպանությունը: 2015 թ. հուլիսի 24-ին Հայոց ցեղասպանության վերաբերյալ բանաձև ընդունվեց նաև Բելգիայի Ներկայացուցիչների պալատի կողմից:

1998 թ. ապրիլի 22-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խորհրդարանը Հայոց ցեղասպանությունը դատապարտող որոշում ընդունեց:

2000 թ. մարտի 29-ին Շվեդիայի խորհրդարանը բանաձև ընդունեց Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման մասին:

2000 թ. նոյեմբերի 10-ին Վատիկանն իր հայտարարության մեջ Հայոց ցեղասպանությունը համարեց XX դարի հետագա բոլոր սարսափների սկիզբը: 2015 թ. ապրիլի 12-ին Հռոմի պապ Ֆրանցիսկոս I-ը Վատիկանում պատարագի ժամանակ Հայոց ցեղասպանությունն անվանեց 20-րդ դարի առաջին ցեղասպանություն:

2000 թ. նոյեմբերի 16-ին Իտալիայի խորհրդարանը Հայոց ցեղասպանությունը դատապարտող որոշում ընդունեց:

2001 թ. հունվարի 18-ին Ֆրանսիայի Ազգային ժողովը և Սենատը համատեղ օրենք ընդունեցին Հայոց ցեղասպանությունը ճանաչելու մասին, որը հունվարի 29-ին վավերացվեց Ֆրանսիայի նախագահի կողմից:

2003 թ. դեկտեմբերի 16-ին Շվեյցարիայի Ազգային խորհուրդը ճանաչեց Հայոց ցեղասպանությունը:

2004 թ. նոյեմբերի 30-ին Սլովակիայի Ազգային Ասամբլեան որոշում ընդունեց Հայոց ցեղասպանությունը ճանաչելու մասին:

2004 թ. դեկտեմբերի 21-ին Նիդեռլանդների խորհրդարանի ստորին պալատը հայտարարություն ընդունեց Հայոց ցեղասպանության ճանաչման մասին:

2005 թ. ապրիլի 19-ին Հայոց ցեղասպանությունը ճանաչեց և դատապարտեց Լեհաստանի Սեյմը:

2005 թ. հունիսի 15-ին Գերմանիայի Բունդեստագն ընդունեց Հայոց ցեղասպանության վերաբերյալ առաջին բանաձևը: 2015 թ. ապրիլի 23-ին Գերմանիայի նախագահ Յոախիմ Գաուկն իր ելույթում դատապարտեց Հայոց ցեղասպանությունը, իսկ 2016 թ. հունիսի 2-ին Գերմանիայի Բունդեսթագն ընդունեց նոր բանաձև, որով ճանաչվում ու դատապարտվում էր Հայոց ցեղասպանությունը:

2005 թ. հուլիսի 14-ին Վենեսուելայի Ազգային Ասամբլեան ընդունեց Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձև:

2005 թ. դեկտեմբերի 15-ին Լիտվայի Ասամբլեան ընդունեց Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձև:

2007 թ. հուլիսի 7-ին Չիլիի Սենատը միաձայն ընդունեց Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձև: 2015 թ. ապրիլի 14-ին Հայոց ցեղասպանության վերաբերյալ բանաձև ընդունվեց նաև Չիլիի Պատգամավորների պալատի կողմից:

2007 թ. նոյեմբերի 19-ին ՄԵՐԿՈՍՈՒՐ-ի խորհրդարանական վեհաժողովի լիազումար նիստում Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման որոշում կայացվեց:

2010 թ. մարտի 11-ին Շվեդիայի խորհրդարանը՝ Ռիկստագը, ընդունեց 1915 թ. Օսմանյան Թուրքիայում իրագործված հայերի, ասորիների և պոնտացի հույների ցեղասպանությունը ճանաչող բանաձև:

2014 թ. նոյեմբերի 27-ին Բուլվիայի Սենատի և Պատգամավորների պալատի ընդունած բանաձևերով ճանաչվեց ու դատապարտվեց Հայոց ցեղասպանությունը:

Հայ ժողովրդի նկատմամբ իրագործված ոճրագործությունը դատապարտվել է նաև Հայոց ցեղասպանությունը դեռևս պաշտոնապես չճանաչած բազմաթիվ երկրների նահանգային ու քաղաքային օրենսդիր մարմինների կողմից:

Միանգամայն սպասելի էր, որ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի՝ 2015 թվականին նորանոր երկրներ պետք է միանային այդ հանցագործությունը ճանաչած ու դատապարտած երկրների շարքին:

2015 թ. ապրիլի 22-ին Օսմանյան կայսրությունում հայերի հանդեպ իրագործված ցեղասպանության 100-րդ տարելիցի հիշատակի կապակցությամբ Հայոց ցեղասպանությունը ճանաչող ու դատապարտող բանաձև ընդունեց Ավստրիայի խորհրդարանը: Մայիսի 6-ին Հայոց ցեղասպանությունը ճանաչող ու դատապարտող բանաձև ընդունեց Լյուքսեմբուրգի խորհրդարանը:

2015 թ. մայիսի 29-ին Բրազիլիայի Դաշնային Սենատի ընդունած օրինագծով ճանաչվեց ու դատապարտվեց Հայոց ցեղասպանությունը, իսկ հոկտեմբերի 29-ին Հայոց ցեղասպանությունը ճանաչվեց ու դատապարտվեց Պարագվայի Սենատի կողմից ընդունված բանաձևով:

2017 թ. հունվարի 26-ին Դանիայի խորհրդարանն ընդունեց Հայոց ցեղասպանությունը ճանաչող և դատապարտող բանաձև:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումն ու դատապարտումը շարունակվում է, և նորանոր երկրներ են դատապարտելու մարդկայնության դեմ ուղղված մեծագույն հանցագործություններից մեկը՝ XX դարի առաջին ցեղասպանությունը:

Միջազգային հանրության և թուրք առաջադեմ հասարակության ճնշումը վաղ թե ուշ հանգեցնելու է Թուրքիայի Հանրապետության կողմից հայերի դեմ իրագործված ցեղասպանության ճանաչմանն ու այդ հանցագործության հետևանքների հաղթահարմանը:

5.3. Համահայկական հռչակագրի սկզբունքները և Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման խնդիրը

Հայ ժողովուրդն արդեն մի քանի տասնամյակ պայքարում է 20-րդ դարասկզբին իր նկատմամբ իրագործված ցեղասպանության ճանաչման և դատապարտման համար: Այդ ժամանակամիջոցում ծավալված պայքարի արդյունքում տարբեր երկրների խորհրդարանների և միջազգային կազմակերպությունների կողմից ընդունվել են Հայոց ցեղասպանությունը ճանաչող ու դատապարտող բանաձևեր, որոնք չափազանց կարևոր են, քանզի դրանցով սկզբունքային գնահատական է տրվել հայերի նկատմամբ 20-րդ դարասկզբին կատարվածին՝ այն որակելով իբրև ցեղասպանություն և մատնանշվել է տվյալ հանցագործությունն իրագործած պետությունը: Սակայն, չնայած այդ ամենին, Թուրքիան պետական մակարդակով շարունակում է ժխտել հայերի նկատմամբ կատարված հանցագործությունը: Տվյալ պայմաններում ակնհայտ է դառնում, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման համար

պայքարելով՝ անհնար է հասնել հարցի վերջնական հանգուցալուծմանը և վաղուց հասունացել է ժամանակը՝ պայքարելու այդ հանցագործության հետևանքների հաղթահարման ու հատուցման համար: Այս ուղղությամբ արդեն իսկ կատարվեց առաջին լուրջ քայլը, երբ 2015 թ. հունվարի 29-ին հենց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի հուշահամալիրի մոտ պաշտոնապես հրապարակվեց «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հոչակագիրը»:

Այդ փաստաթղթով Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովն ու Սփյուռքում գործող տարածաշրջանային հանձնախմբերը, հանդես գալով համայն հայության անունից, հիմնվելով երիտթուրքերի վարչակազմը դատապարտող 1919–1921 թթ. Օսմանյան ռազմական արտակարգ ատյանների դատավճիռների, 1915 թ. Անտանտի պետությունների մայիսի 24-ի համատեղ հոչակագրի, 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի հաշտության պայմանագրի և 1920 թ. նոյեմբերի 22-ի՝ ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճռի վրա և ղեկավարվելով ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 1946 թ. դեկտեմբերի 11-ի 96(1) բանաձևի, 1948 թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի, 1968 թ. նոյեմբերի 26-ի «Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի, ինչպես նաև 1966 թ. դեկտեմբերի 16-ի «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի և մարդու իրավունքների վերաբերյալ՝ բոլոր այլ միջազգային ակտերի համապատասխան սկզբունքներով և դրույթներով հայտարարեց, որ այդ պահից ի վեր մեկնարկում է հայ ժողովրդի միասնական պայքարը ոչ միայն Հայոց ցեղասպա-

նության փաստի համաշխարհային ճանաչմանը հասնելու, այլև ցեղասպանության հետևանքների հաղթահարման համար¹:

Միանգամայն բնական է, որ, պաշտոնական շրջանառության մեջ դնելով «Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարում» ձևակերպումը, ինչը Հայոց պահանջատիրության, հասուցման գաղափարի դիվանագիտական արտահայտությունն է, հռչակագրային բնույթ ունեցող սույն փաստաթղթում չէր հստակեցվում, թե ի՞նչ է հասկացվում «Հայոց ցեղասպանության հետևանքներ» հասկացության տակ և ինչպե՞ս կամ ի՞նչ չափով է պատկերացվում այդ հետևանքների հաղթահարումը, քանզի կան հետևանքներ, որոնք ուղղակիորեն անվերականգնելի են:

Համահայկական հռչակագիրն ընդունած մարմնի տրամաբանական հաջորդ քայլը պետք է լինի «Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման համար Թուրքիային ներկայացվելիք պատմաիրավական հիմնավոր պահանջների փաթեթ-փաստաթղթի» ընդունումը: Համահայկական հռչակագրի 6-րդ կետն, ըստ էության, հենց դրան է վերաբերվում՝ արձանագրելով, որ պետք է մշակվի իրավական պահանջների թղթածրար՝ դիտելով այն որպես անհատական, համայնքային և համազգային իրավունքների և օրինական շահերի վերականգնման գործընթացի մեկնարկ²: «Պահանջների փաթեթի» կամ «թղթածրարի» ընդունումը կարևոր է այն առումով, որ այդ կերպ Հայոց ցեղասպանության հետևանքների և Թուրքիային ներկայացվելիք պահանջների հարցում կձևավորվի համազգային միասնական մոտեցում:

Հայոց ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովրդին հասցված վնասներն ու կորուստները և դրանց չվերացման պատճառով

¹ Տե՛ս «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիրը», <http://www.president.am/hy/press-release/item/2015/01/29/>

² Տե՛ս նույն տեղում:

առաջացած հետևանքները պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ ա) հայրենագրկում, բ) մարդկային կորուստներ, գ) մշակութային ժառանգության կորուստ, դ) նյութական կորուստներ, ե) հոգեկան խեղումներ ու հոգեբանական բարդոյթներ:

Հայոց ցեղասպանության գլխավոր հետևանքի՝ հայրենագրկման հաղթահարման պահանջը, օրինակ, կարող է հիմնավորվել 1920 թ. նոյեմբերի 22-ի ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռով, ինչն ընդունվել է ցեղասպանության իրականացման պահին գործող միջազգային իրավական նորմերին համապատասխան¹:

Հայոց ցեղասպանության արդյունքում մշակութային ժառանգության կորուստների վերականգնման պահանջը, կարող է հիմնավորվել 1923 թ. հուլիսի 24-ի Լոզանի պայմանագրի՝ ոչ մահմեդականների իրավունքների պաշտպանությանը վերաբերող 42 հոդվածի 3-րդ մասով, որի համաձայն՝ թուրքական կառավարությունը պարտավորվել է լիակատար պահպանության տակ առնել եկեղեցիները, սինագոգները, գերեզմանները և փոքրամասնությունների այլ կրոնական հաստատությունները: Տվյալ հոդվածի պահանջից բխում է ոչ միայն եկեղեցիները չքանդելն ու չավերելը, այլև դրանց ամրացումն ու նորոգումը²: Բացի դրանից, Թուրքիայում հայկական մշակութային ժառանգությունը կարող է պաշտպանվել նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի կանոնադրության դրույթներով, քանի որ թե՛ Հայաստանը և թե՛ Թուրքիան հանդիսանում են այդ կազմակերպության անդամ-երկրներ:

Ինչ վերաբերվում է ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովրդին հասցված նյութական կորուստներին, ապա սեղմ ժամկե-

¹ Մարության Ա., *ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճռի քաղաքական ու միջազգային իրափական նշանակությունը*, «Մեծ երկուն. դատապարտումից հատուցումն» (հոդվածների ժողովածու), Ե., 2011, էջ 97:

² Տե՛ս http://www.lib.byu.edu/index.php/Treaty_of_Lausanne

տներում 1919 թ. Փարիզի Խաղաղության վեհաժողովին հայկական պատվիրակությունների՝ Ավետիս Ահարոնյանի և Պողոս Նուբար փաշայի կողմից ներկայացված մոտ 19.131 մյոֆրանսիական ֆրանկի՝ հաշվարկն, անշուշտ, խիստ մոտավոր է և ենթակա ճշգրտման: Հայոց ցեղասպանության նյութական կորուստների հատուցման համար փայլուն նախադեպային հիմք կարող է հանդիսանալ 1952 թ. սեպտեմբերի 10-ի Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության և սիոնիստների Պահանջների կոնֆերանսի միջև կնքված Լյուքսեմբուրգյան համաձայնագիրը, որով Գերմանիան սկսեց Հոլոքոստի նյութական վնասների հատուցումը հրեաներին²:

Հայոց ցեղասպանության հոգեբանական հետևանքների վերականգնման տեսակետից միջազգային իրավունքում կիրառելի է սատիսֆակցիան*, որի առաջին դրսևորումը պետք է լինի Թուրքիայի Հայոց ցեղասպանության ժխտողական քաղաքականությունից հրաժարումը, կատարված հանցագործության փաստի ճանաչումը և պաշտոնական ներողության հայտնումը: Սատիսֆակցիայի այս գործողությունները ընդամենը Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման առաջին անհրաժեշտ քայլերն են, որոնց հաջորդելու է Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործընթացը այլ՝ հայրենիքի նկատմամբ իրավունքների վերականգնման և նյութական հետևանքների հատուցման հարթություններում:

¹ *Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստները, կազմող*

Լ. Բարսեղյան, Ե., 1999, էջ 9:

² **Մարության Հ.,** *Գերմանիայի ֆինանսական փոխհատուցումները հրեությանը* (ձևավորումը, գործընթացը, ներկա վիճակը), «Արևմտահայության պահանջադրության հիմնախնդիրները» (գիտագործնական միջազգային գիտաժողով), Կիպրոս-Նիկոսիա, 18–19 ապրիլի, 2008 թ., «Գիտական գեկուցումների ժողովածու», Մոսկվա, 2008, էջ 83:

* Հակաիրավական արարքով պետության կողմից պատճառված բարոյական վնասի հատուցման ձև է:

«Պահանջների փաթեթում» կամ «թղթածրարում» Հայոց ցեղասպանության հետևանքների հստակեցումն ու դրանից բխող իրավական պահանջների ձևակերպումն, անշուշտ, բավարար չեն դրանք կենսագործելու համար: Անհրաժեշտ է ստեղծել նաև Հայոց ցեղասպանության հետևանքները հաղթահարումն ապահովող մարտավարական, կիրառական փաստաթուղթ՝ «Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործողությունների ծրագիրը», որում մատնանշվելու են այն մեթոդներն ու մեխանիզմները, որոնցով հնարավոր է լինելու հասնել վերը նշված հետևանքների հաղթահարմանը: Այս փաստաթուղթն, ի տարբերություն Համահայկական հռչակագրի ու «Պահանջների փաթեթի» կամ «թղթածրարի», պետք է լինի փակ, սահմանափակ օգտագործման համար նախատեսված՝ թույլ չտալու համար, որ հակառակորդը նախապես իմանալով՝ հնարավորություն ստանա կանխարգելիչ քայլերով չեզոքացնել իր համար անբարենպաստ հետևանքները¹: Գործողությունների ծրագրում պետք է ամրագրվի Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման ուղղությամբ կատարվելիք աշխատանքների դերաբաշխումը՝ Հայաստանի և Սփյուռքի միջև, ելնելով նրանց իրավասություններից, կարողություններից ու փորձառություններից: Ծրագրում նաև պետք է հստակեցվեն այն ուղղությունները, որոնցով պետք է զուգահեռաբար աշխատանքներ տարվեն թե՛ իրավական, և թե՛ քաղաքական հարթություններում:

Պետք է նշել, որ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին Հայաստանի Հանրապետությունն իր կատարած քայլերով ցեղասպանության հանցագործության դեմ պայքարի առաջամարտիկի դեր ստանձնեց: 2015 թ. մարտի 24-ին, ՀՀ Ազգային ժողովը 1915-1923 թթ.² Օսմանյան կայսրությունում ասորիների³ և հույների ցե-

¹ Տե՛ս Մարության Ա., *Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները*, Ե., 2014, էջ 286:

ղասպանությունը դատապարտող հայտարարություն ընդունեց: Նույն թվականի ապրիլի 15-ին «ՀՀ տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքում կատարվեց փոփոխություն, որով դեկտեմբերի 9-ը՝ ՄԱԿ-ի 1948 թ. «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման ու դրա համար պատժի մասին» կոնվենցիայի ընդունման օրը, հռչակվեց ցեղասպանությունների դատապարտման և հիշատակման օր: Հայաստանի այս նախաձեռնությունը հասավ իր տրամաբանական ավարտին, երբ սեպտեմբերի 11-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 69-րդ նստաշրջանի 103-րդ լիազումար նիստում կոնսենսուսով ընդունվեց Հայաստանի ներկայացրած բանաձևը, որով դեկտեմբերի 9-ը հռչակվեց ցեղասպանության հանցագործության զոհերի հիշատակի, արժանապատվության և այդ հանցագործության կանխարգելման միջազգային օր:

2015 և 2016 թվականներին տարբեր երկրներից ժամանած անվանի գիտնականների, հոգևորականների, լրագրողների ու քաղաքական գործիչների, մասնակցությամբ Երևանում կազմակերպվեցին «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» առաջին և երկրորդ գլոբալ ֆորումները, ինչպես նաև ցեղասպանության հանցագործության դեմ պայքարող անձանց «Ավրորա» մրցանակաբաշխությունները: Չնայած այս ակնառու հաջողություններին հայ ժողովրդի նկատմամբ իրագործված ցեղասպանության ճանաչման, դատապարտման ու այդ հանցագործության հետևանքների հաղթահարման ուղղությամբ դեռևս շատ անելիքներ կան: Այս առումով մշտապես պետք է հիշել, որ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարումը ոչ միայն հայության իրավունքների վերականգնման ու Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման հարց է, այլ նաև՝ անմեղ զոհերի հիշատակի առաջ մեր սրբազան պարտքն է:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արխիվային նյութեր

- 1.1. ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 109, գ. 379:
- 1.2. ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 12:
- 1.3. ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 126, գ. 423, գ. 532, ց. 5, գ. 56, գ. 132, գ. 138:
- 1.4. ՀԱԱ, ֆ. 117, ց. 1, գ. 1880:
- 1.5. ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94:
- 1.6. ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 22:
- 1.7. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 86:
- 1.8. ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 36:
- 1.9. ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 438, գ. 453:
- 1.10. ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 9:
- 1.11. ՀԱԱ, ֆ. 654, ց. 4, գ. 17:
- 1.12. ՀԱԱ, ֆ. 1086, ց. 3, գ. 156:

2. Փաստաթղթերի ժողովածուներ

- 2.1. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Զ. Կիրակոսյանի խմբ., Ե., 1972:
- 2.2. Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ. (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), պատ. խմբ.՝ Ա. Վիրաբյան, կազմ.՝ Ս. Միրզոյան, Ա. Ղազիյան, Ե., 2003:

- 2.3. Հայոց ցեղասպանությունը Թուրքիայում բուլղարական դիվանագիտական փաստաթղթերի լույսի ներքո, կազմող Հ. Կիլիկյան, բուլղարերենից թարգմանեցին Զ.Մ. Ղասաբյանը, Կ.Հ. Ճինգոզյանը, Ե., 1996:
- 2.4. Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, Առաջաբանը, թարգմ. և ծանոթագր. Ա.Հ. Փափազյանի, Ե., 1988:
- 2.5. Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու (կազմ. Մ.Գ. Ներսիսյան, Ռ.Գ. Սահակյան, Մ.Գ. Ներսիսյանի խմբ.), Ե., 1991:
- 2.6. Միջազգային հանրությունը դատապարտում է Հայոց ցեղասպանությունը, կազմող և ներածականի հեղինակ Լ.Ա. Բարսեղյան, Ե., 1999:
- 2.7. Ցեղապանության հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստները, կազմող Լ. Բարսեղյան, Ե., 1999:
- 2.8. Армянский вопрос и Геноцид армян в Турции (1913-1919). Сборник материалов политического архива Министерства иностранных дел Кайзеровской Германии, сост., отв. редактор и автор предисловия В. Микаелян, Е., 1995.
- 2.9. Геноцид армян в Османской империи. Сборник документов. Под редакцией М. Нерсисяна, Е., 1966, Второе, дополненное издание Е., 1983.
- 2.10. Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, М., 2003, т. 2, ч. 1.
- 2.11. Международные отношения в эпоху империализма, Документы из архивов Царского и Временного правительства. 1878-1917, М.-Л., 1931-1940, серия III, т. 7, ч. 2.

- 2.12. Beylerian A., Les Grandes Puissances, L'Empire Ottoman et les Arméniens dans les Archives Françaises, 1914-1918, Paris, 1983.
- 2.13. Lepsius Joh., Deutschland und Armenien 1914-1918. Sammlung diplomatischer Aktenstücke, Potsdam, 1919:

3. Մենագրություններ

- 3.1. Ադոնց Ն. Հայկական հարցի լուծման շուրջ, Ե., 1989:
- 3.2. Ա-Դօ, Մեծ դեպքերը Վասպուրականում 1914-1915 թվականներին, Ե., 1917:
- 3.3. Այլախոս և այլադավան հայեր, Ե., 2007:
- 3.4. Անդրեասեան Տ., Զեյթունի անձնատուությունը և Սուեիտիոյ ինքնապաշտպանութիւնը, Գահիրէ, 1915:
- 3.5. Անումյան Մ., Ճանաչում և դատապարտում. Երիտթուրքերի դատավարությունները (1919-1921 թթ. և 1926 թ.), Ե., 2013:
- 3.6. Աստույան Ա., Դարի կողոպուտը. Հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրությունում 1914-1923 թթ., Ե., 2013:
- 3.7. Ավետիսյան Ս., Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեի գործունեությունը Հայաստանում 1918-1930 թթ., Ե., 2009:
- 3.8. Արզումանյան Մ.Վ., Արհավիրքից վերածնունդ, Ե., 1973:
- 3.9. Աբջան Թ., Երիտթուրքերի գործած ոճիրը մարդկության դեմ. Հայոց ցեղասպանությունը և էթնիկ զտումները Օսմանյան կայսրությունում, Ե., 2015:
- 3.10. Աբջան Թ., Հայերի բռնի իսլամացումը, Լոություն, Ժխտում և Ուժացում, Ե., 2016:
- 3.11. Բարսեղով Յու., Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը, Ե., 1999:

- 3.12. Գալուստեան Գ.Հ., Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Ջէյթուն, Նիւ Եորք, 1934:
- 3.13. Գալուստեան Կ., Գաբիկեան Մ., Ագ-Տադի քառամեայ գոյամարտը, Մարսէյլ, 1932:
- 3.14. Գասպարյան Ռ.Հ., Հայկական կոտորածները Կիլիկիայում (XIX դարի 90-ական թթ. – 1921 թ.), Ե., 2005:
- 3.15. Գուստ Վ., Հայերի ցեղասպանությունը 1915-1916, Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի փաստաթղթերից, Ե., 2008:
- 3.16. Դալլաքյան Կ., Հայ Սփյուռքի պատմություն, Ե., 2004:
- 3.17. Զուիցերիացի հայասեր Յագուպ Քիւնցլեր. իր հայանպաստ գործունեութեան 40-ամեակին առթիւ, Պէյրութ-Հալէպ, 1946:
- 3.18. Թէոդիկ, Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին աղետելի 1915 տարին, Նիւ Եորք, 1985:
- 3.19. Թերզեան Յ., Կիլիկիոյ աղետը, հ. II, Կ.Պոլիս, 1912:
- 3.20. Թորիկեան Շ., Հայկական հարցը եւ միջազգային օրէնքը, Պէյրութ 1976:
- 3.21. Թովուլյան Հ., Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841-1946), Ե., 1986:
- 3.22. Կիրակոսյան Զ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Ե., 1965:
- 3.23. Կիրակոսյան Զ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք առաջին, գիրք երկրորդ, Ե., 1982, 1983:
- 3.24. Կոսոյեան Հ., Վան բերդաքաղաքի ժողովրդային հերոսապատումը, Թեհրան, 1966:
- 3.25. Հակոբյան Թ., Կանաչ ու սեւ, Արցախյան օրագիր, Ե., 2008:
- 3.26. Հակոբյան Հ., Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը, Ե., 2000:

- 3.27. Հակոբյան Հ., Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական ու իրավական հիմքերը, Ե., 2002:
- 3.28. Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ, խորհրդարանական լսումներ, 19-20 դեկտեմբերի 2007 թ., Եր., 2011:
- 3.29. Հովհաննիսյան Ն., Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է, Ե., 2010:
- 3.30. Ղազարեան Հ., Ցեղասպան թուրքը, Պէյրուֆ, 1968:
- 3.31. Մաթոսյան Տ., Հայոց ցեղասպանություն և Հրեական Հոլոքոստ. համեմատական փորձ, Ե., 2005:
- 3.32. Մարության Ա., Հայոց ցեղասպանության գործով միջազգային դատարան դիմելու հիմքերն ու հնարավորությունները, Ե., 2014:
- 3.33. Մարության Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման պատմաիրավական հիմնախնդիրներն ու հիմնավորումները, Ե., 2014:
- 3.34. Մարության Ա., Հայոց ցեղասպանության հիմնահարցը համաշխարհային քաղաքականության ազդեցիկ դերակատարների՝ Թուրքիայի հետ հարաբերությունների համատեքստում, Ե., 2015:
- 3.35. Մարության Ա., Հայոց ցեղասպանության հարցը Թուրքիայի արդի ներքաղաքական զարգացումների համատեքստում, Ե., 2016:
- 3.36. Մելքոնյան Ա., Հայոց պատմության դասերն ու պատգամները, Ե., 2013:
- 3.37. Մելքոնյան Ա., Ցեղասպանություն և հայրենագրկում. ճանաչումից՝ հատուցում, Ե., 2015:

- 3.38. Մելքոնյան Է., Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, Ե., 2005:
- 3.39. Մոսեսովա Ի., Հովնանյան Ա., Բաքվի ջարդերը, Ե., 1992:
- 3.40. Մկան Զադե Ռիֆաթ, Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը և Իթթիհատի հայաջինջ ծրագրերը, Ե., 1990:
- 3.41. Յուշեր Արմենակ Եկարեանի, Գահիրէ, 1947:
- 3.42. Նասիպեան Ա., Բրիտանիա եւ Հայկական հարցը 1915-1923, Պէյրութ, 1994:
- 3.43. Պողոսյան Հ. Մ., Զեյթունի պատմություն, Ե., 1969:
- 3.44. Ռենե Պյուռ, Զմյուռնիայի վախճանը, Ե., 2001:
- 3.45. Ռոստոմ, Մահուան վաթառնամեակին առթիւ, Պէյրութ, 1979:
- 3.46. Սահակեան Ա., Դիցազնական Ուրֆան և իր հայորդիները, Պէյրութ, 1955:
- 3.47. Սահակյան Ռ. Գ., Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921 թթ., Ե., 1970:
- 3.48. Սահակյան Ռ., Խոտավերդյան Կ., Հայերի ցեղասպանությունը տասնամյակների լույսի ներքո, Ե., 1995:
- 3.49. Սաֆարյան Գ., Հայոց ցեղասպանության պատմաիրավական ասպեկտները, Ե., 2015:
- 3.50. Սաֆրաստյան Ռ., Օսմանյան Կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Ե., 2009:
- 3.51. Սիմոնյան Հ., Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), Ե., 2009:
- 3.52. Ստեփանյան Հ., Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում, Ե., 2011:

- 3.53. Վարդանյան Վ., Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացման իրավական հիմնախնդիրները, Ե., 2017:
- 3.54. Վարդ-Մեխակ, Ջէյթունի նահանջը, Կ. Պոլիս, 1922:
- 3.55. Տատրեան Վ., Հայկական ցեղասպանությունը խորհրդարանային եւ պատմագիտական քննարկումներով, Ե., 1995:
- 3.56. Տատրյան Վ., Հայոց ցեղասպանությունը՝ ազգային և միջազգային իրավունքի երկակի հիմնախնդիր, Ե., 2012:
- 3.57. Տերնոն Ի., Անպատժելիություն, վրեժ և ժխտում: Հայկական ցեղասպանությունը միջազգային ատյանների առջև, Ե., 2003:
- 3.58. Քոչարյան Վ., Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում, Ե., 2014:
- 3.59. Օհանջանյան Ա., 1915 թվական. անհերքելի վկայություններ: Ավստրիական վավերագրերը Հայոց ցեղասպանության մասին, Ե., 1997:
- 3.60. Տէր-Հարությունեան Հ., Շապին-Գարահիսարի ապստամբությունը, Թիֆլիս, 1917:
- 3.61. Авакян А. Геноцид 1915г. Механизмы принятия и исполнения решений, Е., 1999:
- 3.62. Барсегов Ю., Арбитражное решение президента США по армяно-турецкой границе (политический и международно-правовой комментарий), Е., 1995:
- 3.63. Барсегов Ю., Геноцид Армян - преступление против человечества (о правомерности термина и юридической квалификации), Е., 1990.
- 3.64. Барсегов Ю., Геноцид армян – преступление по международному праву, М., 2000.

- 3.65. Гамелен А., Брон Ж-М. Восстановленная память, Е., 1995:
- 3.66. Дадрян В. Н., История Армянского геноцида, Этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа, Е., 2007.
- 3.67. Марукян А., Основания и возможности обращения в Международный суд по делу геноцида армян, Е., 2014.
- 3.68. Марукян А., Проблема Геноцида армян в контексте отношений влиятельных акторов мировой политики с Турцией, Е., 2015.
- 3.69. Сумгаит...Геноцид...гласность?... Е., 1989:
- 3.70. Фирбюхер Г., Армения, 1915. Уничтожение Турцией культурного народа (отв. ред. В. Микаелян), Е., 1991.
- 3.71. Akçam T., Kurt Ü., Kanunların Ruhu: Emval-i Metruke Kanunlarında Soykırımın İzini Sürmek, Istanbul, 2012.
- 3.72. Bryce J., The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916, London, 1916.
- 3.73. Cetinoglu S., Sermayenin Turkleştirilmesi, Resmi Tarih Tartışmaları -2, Ed. Fikret Başkaya, özgür üniversite Kitaplığı, Ankara, 2006.
- 3.74. Grenville J. A. S., Lord Salisbury and Foreign Policy, London, 1964.
- 3.75. Halacoglu Y., Die Armenien Frage, Klagenfurt-Wien-Ljubljana-Sarajevo, 2006.
- 3.76. Kevorkian R., The Armenian Genocide, A Complete History, I.B.Tauris, 2011.
- 3.77. Kevorkian R. H., Paboudjian P.B., 1915 öncesinde Osmanlı İmparatorluğu'nda Ermeniler, İstanbul, 2013.
- 3.78. Köker O., 100 Yıl Önce Türkiye'de Ermeniler, Istanbul, 2005.

- 3.79. Künzler J. Im Lande des Blutes und der Tränen. Erlebnisse in Mesopotamien während des Weltkrieges, Potsdam, 1921.
- 3.80. Marukyan A., The Basis and Opportunities of Applying to UN International Court on the Case of the Armenian Genocide, Yerevan, 2014.
- 3.81. Marukyan A., The Problem of Armenian Genocide within the Context of Relations between the Influential Actors of World Politics and Turkey, Yerevan, 2015.
- 3.82. Morgenthau H., Ambassador Morgenthau's Story, N.Y., 1918.
- 3.83. Nogales R. de, Four Years Beneath the Crescent, (Trans. from Spanish by M. Lee, with an Introduction by Lieutenant-Colonel E. Davis), N. Y.- London, 1926:
- 3.84. Onaran N., Erval-i metruke olayi, Osmanli'da ve Cumhuriyette Ermeni ve Rum Mallarinin Türkleştirilmesi, Istanbul, 2010.
- 3.85. The Armenian Genocide. History. Politics. Ethics. Edited by R.G. Hovannisian, New Brunswick, 1991.
- 3.86. Üngör U., Polatel M., Confiscation and Destruction, The Young Turk Seizure of Armenian Property, London, 2011.
- 3.87. Uras E., The Armenians in history and the Armenian Question, Istanbul, 1988.
- 3.88. Ussher C. D., Knapp G.H., An American Physician in Turkey. A Narratives of Adventures in Peace and War, New York, Boston, 1917:

4. ԳԻՏԱԿԱՆ ԻՈՂՎԱԾՆԵՐ

- 4.1. Աստոյան Ա., Հայերի ունեզրկման գործընթացը Օսմանյան կայսրությունում 1914-1923 թթ. վկայություններ, փաստեր և փաստաթղթեր, «ՎԷՄ», Ե., 2010, թիվ 3 (31):

- 4.2. Արևմտյան Հայաստանի պատմական հուշարձանների վիճակը 1915 թ.-ից ի վեր, «Վարձք», N 2, Ե., 2010:
- 4.3. «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները» (գիտագործնական միջազգային գիտաժողով), Կիպրոս-Նիկոսիա, 18-19 ապրիլի 2008 թ., «Գիտական զեկուցումների ժողովածու», Մ., 2008:
- 4.4. Մսրլեան Զ., Զանքեր՝ ՄԱԿ-ի 30-րդ պարբերության վերահաստատման ուղղությամբ, «Հայկազեան հայագիտական հանդես», հատոր ԼԲ, Պեյրոթ, 2012:
- 4.5. Վարդանյան Վ., Հայերի դեմ իրագործված ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետության միջազգային իրավական պատասխանատվության հիմքերը, եղանակները, ձևերը և տեսակները, «Նորավանդ» գիտակրթական հիմնադրամի տեղեկագիր, № 1, Եր., 2006:
- 4.6. Стратегические последствия геноцида армян, «Византийское наследство», (информационно-аналитический журнал), N 3, Ե., 2002.
- 4.7. Gulesian M.H., Armenian Refugees, "The Arena", Vol. 17, Boston, 1897.
- 4.8. Yavuz E., Armenian Claims in the Light of the Historical Documents, "Turkish Review", Spring, Vol. 1, N° 3, Ankara, 1986.

5. Մամուլի նյութեր

- 5.1. «Արաքս», Գիրք Բ, 1894-1895, Ս. Պետերբուրգ, 1897:
- 5.2. «Ժողովուրդ», Ղալաթիա (Կ. Պոլիս), 1918, 14/27 դեկտեմբեր:
- 5.3. «Սովետական Ղարաբաղ», 16.01.1990 թ.:
- 5.4. «Վան-Տոսպ», 1916, 19 հունիսի, № 30:

5.5. «Армянский вестник», 1917, N 4, N 10-11.

6. Համադանգային նյութեր

- 6.1. Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի Համահայկական հոչակագիր, <http://www.president.am/hy/press-release/item/2015/01/29>
- 6.2. Гирин И., Vae victis или унижение? <http://bercovich-zametki.com/2007/Zametki/Nomer3/Girin1.htm>
- 6.3. European Parliament Resolution on a political solution to the Armenian question, Doc. A2-33/87, http://www.europarl.europa.eu/intcoop/euro/pcc/aag/pcc_meeting/resolutions/1987_07_20.pdf
- 6.4. http://www.lib.byu.edu/index.php/Treaty_of_Lausanne

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	3
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ	
ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ	
ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ XIX ԴԱՐԱՎԵՐՋԻՆ	
ԵՎ XX ԴԱՐԱՍԿԶԲԻՆ	
1.1. 1894-1896 թթ. հայերի զանգվածային կոտորածներն Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ այլ տարածքներում	6
1.2. 1909 թ. Կիլիկիայի հայության կոտորածները	14
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ	
ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ԵՎ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ	
ՄԱՐՏԵՐԸ	
2.1. Հայերի զանգվածային բնաջնջման երիտթուրքերի ծրագիրը և ցեղասպան քաղաքականության նախապատրաստումը	17
2.2. Մեծ Եղեռնի առաջին փուլը՝ հայ տղամարդկանց զորակոչն ու ոչնչացումը օսմանյան բանակում	21
2.3. Մեծ Եղեռնի երկրորդ փուլը՝ հայ մտավորականության ոչնչացումը	23
2.4. Մեծ Եղեռնի երրորդ փուլը՝ հայ բնակչության բռնի տեղահանությունն ու կոտորածները	26
2.5. Մեծ Եղեռնի չորրորդ փուլը՝ ողջ մնացած հայության ոչնչացումը Սիրիայի և Միջագետքի համակենտրոնացման ճամբարներում	29

2.6. Վանի հերոսական ինքնապաշտպանությունը	30
2.7. Մուսալեռցիների հերոսական ինքնապաշտպանությունը ..	33
2.8. Արևմտահայ գաղթականության վերադարձը և երկրի վերաշինումը 1917 թ.	36

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 1918-1922 ԹԹ.

3.1. Ախալքալաքի գավառի հայության 1918 թ. կոտորածները .	39
3.2. Բաքվի հայության 1918 թ. ջարդերը	41
3.3. 1919-1922 թթ. Կիլիկիայի և Ջմյուռնիայի հայության բնաջնջումը քեմալականների կողմից	43
3.4. Արևմտահայ գաղթականությունը և հայ որբերը Հայաս- տանի Հանրապետությունում 1918-1920 թթ.	47

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

4.1. Հայ-թուրքական սահմանագիծն ըստ Սևրի պայմանագրի և ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի	50
4.2. Ալեքսանդրապոլի, Մոսկվայի ու Կարսի պայմանագրե- րով Սևրի պայմանագիրն ու Վիլսոնի իրավարար վճիռը չեղարկելու Թուրքիայի փորձերը	53
4.3. Հայոց ցեղասպանության հետևանքները: Մշակութային ցեղասպանություն	55
4.4. Հայկական սփյուռքի ձևավորումը	59

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԱՅԱՀԱՆԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ

ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ: ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՈՒՄԸ ԵՎ ՀԱՏՈՒՅՄԱՆ ԽՆԴԻՐԸ

5.1. 1988-1990 թթ. աղբիքեջանահայության նկատմամբ իրագործված ցեղասպանության և էթնիկ զտումների քաղաքականությունը	63
5.2. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման գործընթացը	66
5.3. Համահայկական հռչակագրի սկզբունքները և Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման խնդիրը ..	74
ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	81

ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ

**ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ**

Համակարգչային ձևավորումը՝ Ն. Աղամյանի
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Ստորագրված է տպագրության 12.12.2018 թ.
Տպաքանակը՝ 200 օրինակ

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA**

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan
<http://www.academhistory.am>



[2000 թ.]

ՆԱ ՉԻՃՆԱՐԱՐ ԳԻՏ. ԳՐԱԴ.



FL0578064

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF HISTORY

